Azg Ազգ

4 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 202 (4582)

ISSN: 1829-1651

«ՆԱՏՕ-ն կարող է ռազմական գործողություններ իրականացնել մեր սահմաններից դուրս»

Այս մասին երեկ «Էխո Մոսկվի» ռադիոկայանի եթերում հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Անդերս Ֆոգ Ռասմուսենը**: «Ինչ վերաբերում դաշինքի անդամ երկրներից հեռու հնարավոր ռազմական գործողություններ վարելուն, ապա դա կախված է իրավիճակից: Շեշտեմ, որ մեր հիմնական խնդիրը մեր անդամների սահմանների, տարածքների հսկայական պաշտպանությունն է, որը, ի դեպ, կարող է սկսվել մեր սահմաններից հեռու: Աֆղանստանը սրա փայլուն օրինակն է, հետևաբար ես չեմ բացառում, որ դաշինքը կարող է իրականացնել ռազմական գործողություններ մեր սահմաններից դուրս», հայտարարել է Ռասմուսենը:

Թուրքիայի համար հուսադրող է համարվում հանրապետականների հաղթանակը ԱՄՆ-ի Կոնգրեսի ընտրություններում

Սակայն հրեական լոբբիի ազդեցությունը Հանրապետական կուսակցության վրա կարող է հուսախաբ անել Անկարային

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ում Կոնգրեսի միջանկյալ ընտրություններն էին: Դրանք անցկացվել են Ներկայացուցիչների պալատի բոլոր 435 եւ 100 տեղանոց Սենատի 37 տեղերի համար: Ընտրությունների արդյունքում հանրապետականները Ներկայացուցիչների պալատում ստացան 435 տեղերից 243-ը, զգալի գերազանցելով ոչ միայն 192 տեղ ստացած դեմոկրատներին, այլեւ մեծամասնություն կազմելու համար անհրաժեշտ 218 ցուցանիշը: Այսպիսով, ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում վերահսկողությունը Դեմոկրատական կուսակցությունից անցավ Հանրապետական կուսակցությանը:

Թեեւ մինչ այդ 57 տեղեր ունեցող դեմոկրատների թիվը Սենատում կրճատվեց 51-ի, այնուամենայնիվ, նրանք թեկուզ մեկ ձայնի առավելությամբ կարողացան այնտեղ պահպանել իրենց մեծամասնությունը: Սակայն դա իրերի դրությունը չի փոխում, քանի որ Ներկայացուցիչների պալատում մեծամասնություն կազմելու շնորհիվ հանրապետականները ստանում են նախագահ Բարաք Օբամայի Կոնգրեսին ներկայացված օրինագծերին հակադրվելու հնարավորություն:

Տես էջ 8

Վրացական արդարադատության «ծուղակ» հայաստանցիների համար

Արտաշես Մելքոնյանին դատապարտել են 2,5 տարվա ազատազրկման՝ առանց մեկ իսկ ապացույցի

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խորհրդային Միության փլուզումից հետո շատերի համար մեքենայով անցումը Հայաստանից Ռուսաստան Վրաստանով եւ Հյուսիսային Կովկասով այնքիսի վտանգների առաջ կարող էր կանգնեցնել, որ կյանքի գնով անցումը պետք էր հավասարակշռել բոլոր հարցերի առնչությամբ: Ինչպես վրացիները, հատկապես ոստիկանները, այնպես էլ ինգուշները, կաբարդիններն ու Հյուսիսային Կովկասի մյուս ժողովուրդների ներկայացուցիչները թալանում էին այդ ճանապարհին հայտնվածներին, սպառնում, բռնություն կիրառում, վերցնում վերջին կոպեկն ու անգամ մեքենաները:

Այս հիշողությունները բնավ էլ անցյալի կատեգորիա չեն, քանի որ մերօրյա իրականությունը եւս այդ ճանապարհի թալանչիների որոշ օրինակներ է ներկայացնում, ու չհիշել այդ հանցագործ իրողություններն ու վայրենու կերպարով ներկայացող թալանչիներին հնարավոր չէ:

Տես էջ 3

ՀԱԿԱՅԴԵԼ Է ՊԵՏՔ

Մեր ազգն ու բանակը

Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադեւոսյանը երեկ կայացած ասուլիսում հայ-ադրբեջանական պատերազմի վերսկսումը բացառող երաշխիքներ համարեց «մեր ազգն ու բանակը»: Կոմանդոսը, սակայն, նկատեց, որ այսօր մեր հասարակությունը բաժանված է. «Պետք է միավորվե՛նք, կենտրոնանա՛նք, ձգտե՛նք մեր երկրի ներսում լինել միահամուռ, որպեսզի դա տեսնի միջազգային հանրությունը, տեսնի Ադրբեջանը: Մենք կարողացել ենք ապացուցել, որ քիչ լինելով կարողացել ենք դիմագրավել ադրբեջանական հսկայածավալ ուժերին: Մենք հաջողության հասած ազգ ենք ու պետք է հպարտանանք: Ես դեմ չեմ քրիստոնեական ուսմունքին, բայց դաժանությանը պետք է պատասխանել դաժանությամբ, պետք է պատասխանն ադեկվատ լինի: Հակառակորդը տարիներ շարունակ խախտում է հրադադարի ռեժիմը, գնդակոծում է մեր դիրքերը, իսկ մենք լռում ենք: Մարդկայնորեն դա ճիշտ է՝ մարդը չպետք է մարդ սպանի, բայց նման պայմաններում դա հնարավոր չէ: Մենք պետք է դիմենք համարժեք քայլերի, այլապես հնարավոր չէ կանգնեցնել հակառակորդին: Շփման գծում կրակում են, մերոնց ասում են՝ չկրակե՛ք: Մենք ունենք զենք, ունենք փամփուշտներ, բայց ադրբեջանական կողմից հնչող տասնյակ կրակոցներին մեկ կրակոցով ենք պատասխանում», ասաց արցախյան հերոսը՝ ընդգծելով, որ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայկական բանակի բարոյական ոգին այսօր շատ բարձր է: Շուշին ազատագրած գործողությունների ղեկավարը նաեւ անդրադարձավ բանակում վերջին շրջանում տեղի ունեցող միջադեպերին: Գեներալը նկատեց, որ ամեն մի կոլեկտիվում, հասարակությունում ամեն ինչ չի կարող հարթ ընթանալ: «Բանակում տեղի են ունենում ավելի շատ լավ բաներ, քան վատ, բայց այդ վատը փակում է լավը, ինչն էլ առիթ է դառնում քննադատություններին», ասաց նա ու շարունակեց, որ մասամբ մեղավոր է նաեւ պաշտպանության նախարարությունը, որի կապը հասարակության հետ եղել է «շատ թույլ ու կիսափակ»: Հ. Ա.

Համաձայն ասրախանյան պայմանավորվածության

Հայաստանի պաշտպանության նախարարությունը այսօր ադրբեջանական կողմին կհանձնի ադրբեջանցի մի գերու: ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ «2010-ի հոկտեմբերի 27-ին Ասրախանում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, նոյեմբերի 4-ին, ժամը 12:00-ին հայ-ադրբեջանական շփման գոտու հյուսիսարեւելյան սահմանում՝ Իջեւան-Ղազախ ճանապարհի հատվածում, ադրբեջանական կողմին է հանձնվելու 2010-ին ՀՀ սահմանն ապօրինի հատած եւ այժմ Հայաստանում գտնվող Ադրբեջանի քաղաքացին»: Ելնելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերից՝ մինչեւ ադրբեջանական կողմին հանձնելը Ադրբեջանի քաղաքացու անունազգանունը չի հրապարակվում: Հ. Ա.

Մամեդյարովը «շրջադարձ» է ակնկալում Ասանայում

Աֆղանստանի տարածաշրջանային տնտեսական համագործակցության 4-րդ համաժողովին մասնակցելու նպատակով Ստամբուլ ժամանած Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը պատասխանել է լրագրողների հարցերին, որոնք վերաբերել են նաեւ ղարաբաղյան հիմնախնդրին: Այս մասին տեղեկացնում է Panorama.am-ը՝ մեջբերելով թուրքական Tumgazeteler լրատվական կայքը: Աղբյուրի համաձայն՝ Մամեդյարովը նշել է, որ առաջիկայում հանդիպելու է ՀՀ արտգործնախար Էդվարդ Նալբանդյանի հետ: Բայց նա դեռ վաղ է համարել նշել, թե հանդիպման ժամանակ ինչ հարցերի շուրջ են քննարկում ծավալելու: «Ասրախանում հագեցած բանակցություններ եղան: Երեք նախագահներն էլ արտգործնախարարներին հրահանգել են շարունակել բանակցությունները: Մոտ ժամանակներս աշխատելու ենք հանդիպում կազմակերպելու ուղղությամբ: Այդ հանդիպումից հետո հանդես կգանք հայտարարությամբ, բայց վաղ է դեռ հանդիպումը չկայացած որեւէ հայտարարություն անել», ասել է Մամեդյարովը: Նա նաեւ նշել է, որ դեկտեմբերի 1-2-ին Ղազախստանում հրավիրվելիք ԵԱՀԿ-ի գագաթաժողովը «շրջադարձային նշանակություն կարող է ունենալ ղարաբաղյան խնդրի լուծման համար»: Ըստ Ադրբեջանի առաջին դիվանագետի՝ «պատրաստվել է Կովկասին երկարատեւ խաղաղություն բերող մի ճանապարհային քարտեզ»: Ավելորդ չենք համարում հավելել, որ Հայաստանում իշխող կուսակցությունից երեկ ինչեց կարծիք, որ «առանց Ղարաբաղի Հայաստանը որեւէ ճանապարհային քարտեզ չի ստորագրի Ասանայում»:

Հ. Ա.

Բացվեց Էրեբունի եւ Շենգավիթ համայնքները կապող կամուրջը

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Քաղաքապետարանի փողային նվագախմբերի հնչյունների ներքո Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը երեկ հանդիսավորությամբ կտրեց Էրեբունի եւ Շենգավիթ վարչական շրջաններն իրար կապող կամրջի մուտքի ժապավենը եւ 4-ամյա Արամի, ավագանու ու բնակիչներ հետ առաջինը քայլեց 450 մետր երկարությամբ նորակառույց կամրջով մինչեւ Գարեգին Նժդեհի փողոցի մուտքը:

Հիշեցնենք, որ այդ կամուրջը (ժողովուրդը անվանում է «Վստրեչի կամուրջ») կառուցվել է 1968-ին, եւ շահագործումից հետո ավելի քան 40 տարիների ընթացքում, երբեւէ հիմնանորոգման չի ենթարկվել: Ինչպես եզրակացրել են մասնագետները, խախտվել են կամրջի շինարարական նորմերի պահանջներ, թռիչքային կառուցվածքի տակ կառուցվել են տրանսֆորմատորային ենթակայան, «Պլաստիկ» գործարանի արտադրամաս եւ «Մանվածքային» գործարանի պահեստներ:

Տես էջ 2

«Օրենսդիրներն ու գործարարները ոչ միայն սերտաճած են, այլեւ հանդես են գալիս նույն դեմքով»

Սպառողների ասոցիացիայի նախագահ **Արմեն Պողոսյանի** խոսքով՝ ապրանքատեսակների թանկացումը մշտական երեւույթ է. «Եվ պարբերաբար հարվածում է սպառողների գլխին»: Արմեն Պողոսյանը ցավով նշում է, որ նորից գալու է ապրիլը, եւ նորից ունենալու ենք գազի սակագնի բարձրացում: Անդրադառնալով պարի գնի անսպասելի բարձրացմանը՝ Արմեն Պողոսյանը նշեց, որ թանկացումը հիմնավորված չէ օբյեկտիվ պատճառներով. «Սա կամայական երեւույթ է»: Կաթնամթերքի կամ պարի հումքի ու գնագոյացման մյուս տարրերի առնչությամբ էական փոփոխություններ չեն եղել:

Երեկ «Տեսակետ» ակումբում Սպառողների ասոցիացիայի նախագահը նշեց, որ ավելի շատ պետք է խոսենք տնտեսական հաղաքականության մասին, ինչը մեր երկրում արատավոր է: «Եթե նույն ապրանքատեսակի գինը միաժամանակ թռիչքաձեւ բարձրանում է տարբեր տեղերում եւ առանց օբյեկտիվ պատճառների, ապա դա պետք է դառնա հիմք, որ տվյալ ձեռնարկություններն ու արտադրատեսակների ֆինանսական հոսքերը ուսումնասիրման առարկա դառնան, բայց այս մոտեցումն առայժմ չի գործում», ասաց Արմեն Պողոսյանը, այնուհետեւ ընդծեց. «Չգիտե՞նք, որ մեր օրենսդիրներն ու գործարարները ոչ միայն սերտաճած են , այլեւ նույն դեմքով են հանդես գալիս»:

Անդրադառնալով շաբաթվագի գնի բարձրացմանը՝ բանախոսն այստեղ եւս տրամաբանություն չգտավ: Ավելին՝ շաբաթվագի թանկացումն ավելի քան պարադոքսալ է. շաբաթվագի տեղական արտադրությունը դեռ մի բան էլ պետք է նպաստեր գնի էժանացմանը:

Արմեն Պողոսյանը խոսեց նաեւ այն նվազագույն գիտելիքների մասին, որոնց պետք է տիրապետեն սպառողները, օրինակ՝ սուրգեն սննդամթերքի ամսաթիվը, իրազեկ լինեն, թե ո՞ր խնդրի դեպքում ո՞ր պետական մարմնին կամ հասարակական կառույցին պետք է դիմել: Կարեւոր հանգամանք է նաեւ սպառողների արժանապատվությունը բարձրացնելը: Սպառողների ասոցիացիա դիմում են տարբեր հարցերով, թեեւ բոլոր հարցերի հիմքը մեկն է՝ սպառողների շահերը պաշտպանության կարիք ունեն: Բանախոսի փոխանցմամբ՝«60-70 տոկոս դեպքերում մեզ հաջողվում է լուծել խնդիրը»:

Ասուլիսի վերջում բանախոսը թանկացումների վերաբերյալ վերջնական եզրահանգման եկավ. «Սա պատժելի արարք է, եթե, իհարկե, հիմնավորումները լինեն արժանահավատ»:

Ի. Պ.

Հանձնաժողովը որոշեց ուսումնասիրել «պարի գների իրական բարձրացման» պատճառները

Կարեւորելով այդ ապրանքի «սոցիալական նշանակությունը»

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը երեկ կրկին անդրադարձավ պարի գների բարձրացմանը եւ այդ շուկայում ստեղծված իրավիճակին, սակայն ոչ թե հակամրցակցային համաձայնության առկայության հավանականության կասկածանքով, որը նրան հնարավորություն է տալիս օրենքը, այլ «նկատի ունենալով այս ապրանքի սոցիալական նշանակությունը»: Այդ մասին իր խոսքում ասաց հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը:

Հանձնաժողովի նախագահն ասաց նաեւ, որ այս շուկայում բարձր կենտրոնացվածություն չկա, եւ գործում են 78 ընկերություններ, որոնց թիվը ժամանակի ընթացքում ավելանում է: Մինչդեռ, **Արտակ Շաբոյանի** խոսքերով, հանձնաժողովը մրցակցությունը սահմանափակող երեւույթների առկայությունը սուրգում է միայն բարձր կենտրոնացվածություն ունեցող շուկայում, այսինքն, որտեղ կան խոշոր ընկերություններ, որոնք գերիշխող դիրք ունեն:

Իսկ պարի շուկայում տեղի ունեցած գների բարձրացումը հանձնաժողովը որոշեց ուսումնասիրել՝ նկատի ունենալով դրա սոցիալական նշանակությունը, ինչպես նաեւ «պարզելու համար գների բարձրացման իրական պատճառները» եւ 3 օր ժամկետում այս ոլորտում գործող տնտեսվարողներից պահանջեց տրամադրել անցյալ տարվա հուլիս-դեկտեմբեր եւ այս տարվա հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածներում պարի իրացման մասին տվյալները:

Հիշեցնենք, որ պանիր արտադրողները գների բարձրացումը պատճառաբանել են կաթի մթերման գների բարձրացմամբ, որը ոչ մի ենթադրության չի դիմանում, քանի որ այդ դեպքում պարի գները պետք է բարձրանային ընդամենը 300 դրամի չափով՝ 500-1000 դրամի փոխարեն: Մյուս կողմից, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, չգիտես ինչո՞ւ եւ ի՞նչ հիմնավորմամբ, չի ցանկանում անգամ ենթադրել, որ այս շուկայում տեղի է ունեցել հակամրցակցային համաձայնություն, դա հիմնավորելով, որ շուկայում շատ տնտեսվարողներ կան, եւ իրենք միայն բարձր կենտրոնացված շուկաներում են նման ուսումնասիրություն կատարում: Իսկ օրենքը ոչ մի կերպ չի սահմանափակում նաեւ մեծաթիվ ընկերություններ ունեցող շուկաներում նման ուսումնասիրություն կատարել: Մեկ անգամ եւս կրկնենք, որ պանրի գները բարձրացան միաժամանակ, մեկ օրվա ընթացքում, երկու եւ ավելի տնտեսվարողների կողմից, ինչը օրենքով հստակ սահմանում է որպես հակամրցակցային համաձայնություն: Հանձնաժողովին մնում է միայն փաստերը միմյանց կողքի դնել եւ արձանագրել տեղի ունեցածը, այլ ոչ թե սոցիալական նշանակությունը հիմք ընդունելով ուսումնասիրություն սկսել: Առավել եւս, որ օրենքը ոչինչ չի ասում հանձնաժողովի կողմից սոցիալական խնդիրներով զբաղվելու իրավասության մասին: Ինչեւէ: Մնում է միայն սպասել մի քանի օր եւ տեսնել, թե ի՞նչ կտան հանձնաժողովի ուսումնասիրությունները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սոցիալ-դեմոկրատ հնչակյանը՝ Հնչակյան սոցիալ-դեմոկրատ է դառնում

Երեկ հայտարարություն է տարածել Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության մամլո դիվանը, ըստ որի՝ այս կուսակցության շուրջը տեղի ունեցած իրադարձությունները սպիտել են գնալու հետեւյալ լուծման. ենթարկումներով հավաքական որոշում է կայացվել իրավաբանական նոր գրանցման գնալ եւ դեկտեմբերի առաջիկա շաբաթվա ընթացքում հրավիրել համագումար: Մի խոսքով, հին անունը փոխվում է նորով՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը կդառնա Հնչակյան սոցիալ-դեմոկրատ կուսակցություն: Գումարելիների տեղափոխության հայտնի կանոնը հիշեցի՞ք: Կուսակցությունը շարունակելու է մնալ համաստիյուռ Հնչակյան ընտանիքի լիիրավ անդամ՝ ունենալով կեդրոնական վարչությունում հայաստանի ներկայացուցիչ ի դեմս Վահան Շիրխանյանի. «Կուսակցությունը նաեւ վստահ է, որ ՀԱԿ-ի հովանավորյալ, աշխարհաստիյուռ եւ Հայաստանի հնչակյանության կողմից մերժված Լյուդմիլա Սարգսյան անձն ապօրինաբար եւ անարժանաբար կրում է հնչակյան անվանումը եւ վաղ թե ուշ անցնելու է պատմության անդունդը՝ կրելով դավաճանի պիտակ», ասված է հնչակյան մամլո դիվանի հայտարարության մեջ:

Մ. Խ.

Գյուղատնտեսական կոոպերատիվները ստանում են գյուղսարքավորումներ

CARD հիմնադրամը եւ UMCOR-ը համատեղ իրականացնում են «Կայուն համագործակցության ընդլայնման եւ գյուղատնտեսության զարգացման» (SCEAD) ծրագիրը: CARD հիմնադրամից «Արմենպրեսին» տեղեկացրել են, որ նշված ծրագրի շրջանակներում 12 գյուղատնտեսական կոոպերատիվներ ստացել ու շարունակում են ստանալ ֆինանսական ու տեխնիկական աջակցություն: CARD հիմնադրամի ներմուծած գյուղտեխնիկան կնվազեցնի հնձման ու ներակման ծախսերը եւ կբարձրացնի արտադրության արդյունավետությունը: SCEAD ծրագրի շրջանակներում Արարատի, Արմավիրի եւ Վայոց ձորի մարզերի 15 գյուղերի 21 շահառու կոոպերատիվներին կտրամադրվեն խաղողի այգիների խնամքի բարձրորակ սարքավորումներ՝ 30 մոտոբլոկներ, խոտհնձիչներ, գութաններ եւ 50 ներակիչներ:

Ի. Պ.

Նախագահը Տավուշում էր. Հայաստանը անցնում է սահմանային մեկ միասնական համակարգի

Այրում-Ջիլիզա մաքսակետի նախկին շենքը մեկհարկանի շինություն էր՝ 269քմ մակերեսով: Այն կառուցվել էր դեռեւս նախորդ դարի կեսերին եւ, բնականաբար, չէր համապատասխանում ժամանակակից մաքսակետի գործունեության պահանջներին: Այժմ արդեն մաքսակետի աշխատանքները կշարունակվեն ամբողջովին վերակառուցված ու բարեփոխված երկհարկանի շենքում՝ 555 քմ մակերեսով: Մաքսակետի բարեկարգման համար ծախսվել է 125 մլն դրամ:

Երեկ աշխատանքային այցով Տավուշի մարզ ժամանած նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Այրում-Ջիլիզա մաքսակետի նոր շենքի պաշտոնական բացումը: Գուգարքի տարածաշրջանային մաքսատան պետ Հովիկ Աբովյանի խոսքերով՝ կատարված բազմաթիվ փոփոխություններով հնարավոր է դարձել ապահովել մաքսատան ավելի մեծ թողունակություն. «Հիմա թողունակությունը կազմում է օրական 70 վագոն կամ 400 հազար տոննա», ընդգծեց Աբովյանը՝ հավելելով, որ փոփոխությունները հիմնականում ուղղված են եղել օպերատիվ աշխատանքների իրականացմանը, երկաթգծի վրա տեխնիկայի տեղադրմանը, ինչը թույլ կտա զգալիորեն կրճատել զննումների տեւողությունը. «Մեր եւ «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության համատեղ ուժերով պատրաստվել է զննման տարածք, որը հնարավորություն է տալու ավելի արագ եւ լավ զննում իրականացնել», նշեց Աբովյանը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Բագրատաշեն սահմանային անցակետ, ծանոթացել առկա խնդիրներին եւ աշխատանքներին: Այնուհետեւ նախագահի գլխավորությամբ եւ Բագրատաշեն սահմանային անցակետի պետ Կարեն Գրիգորյանի, պետեկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի մասնակցությամբ խորհրդակցություն է գումարվել: Գագիկ Խաչատրյանը նշել է, որ սահմանային կետերը պետք է համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին, եւ անցակետերում պետք է լինեն բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները, որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխան ծառայություններ մատուցվեն: «Ներկայումս անցակետերը տարբեր փաստաթղթեր են պահանջում մարդկանցից, իսկ սահմանային կառավարման միասնական համակարգի անցնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերը բոլոր մաքսային անցակետերի համար նույնը կլինեն», ասել է Խաչատրյանը:

Հ. Ա.

Հալվա ասելով մնացին

Երեկ ՀԱԿ-ի անդամ Դավիթ Շահնազարյանը, ՀԱԿ-ի անելիքների մասին խոսելիս, ասել է, թե իրենք գնում են արտահերթ նախագահական ընտրությունների: Նա նաեւ նկատել է, թե «Պզոյի» հանցախմբի բացահայտումն ԱՄՆ-ում անպայման իր հետքը կթողնի հայ-ամերիկյան հարաբերությունների վրա:

Իսկ մեկ օր առաջ ՀՀԿ-ի փոխնախագահ Գալուստ Սահակյանի այն հորդորներին, թե ընդդիմությունը լավ պիտի աշխատի, եթե ուզում է խորհրդարանում հայտնվել, Դ. Շահնազարյանը հակադարձել է. «Մնացել էր Գ. Սահակյանն ասի, թե մենք ինչ անենք»:

Մ. Խ.

Բացվեց Էրեբունի եւ Շենգավիթ համայնքները կապող կամուրջը

1-ին էջից

1985-ին պահեստներում բռնկված հրդեհի պատճառով կամրջի ծանրությունը կրող կոնստրուկցիաները լրջորեն վնասվել էին, նվազել կրողունակությունը եւ դարձել վտանգավոր երթեւեկելու համար:

Չնայած 1997-ին կամուրջը ճանաչվել էր վթարային, սակայն ամրացման եւ վերանորոգման աշխատանքները հետաձգվեցին: Ի վերջո կամրջի վերակառուցման կրկնակի մրցույթում հաղթող ճանաչվեց «Կամուրջշին» ընկերությունը եւ այս տարվա մարտի 1-ից սկսեց աշխատանքները: Գրեթե ամբողջությամբ ապամոնտաժվեցին հին կամուրջը կրող 328 հենձանները, ուղետարի բոլոր 23 թռիչքներն եւ ուժեղացվեց կրողունակությունը: Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվել է մոտ 2600 խմ միաձույլ բետոն եւ երկաթբետոն, 1510 տոննա ասֆալտբետոն: Թարմացվել է կամրջի արտաքին տեսքը, ասֆալտապատվել է 20 մետր լայնությամբ երթեւեկելի շերտը, նորոգվել են 3 մետր լայնությամբ երկկողմանի մայթերը, անցկացվել է արտաքին լուսավորության նոր համակարգ: Կամրջի վերակառուցման վրա ծախսվել է 1 մլրդ 823 մլն դրամ:

Ինչպես տեղեկացրեց «Կամուրջշին» ընկերության գլխավոր ճարտարագետ **Արարատ Դարիբյանը**, կամուրջը հաշվարկված է ու ապահովված 9 բալ սեյսմակայունության եւ ունի 100 տարվա օգտագործման ժամկետ:

Այսօրվանից կամուրջը կդառնա երթեւեկելի, եւ կից փողոցների խցանումները կվերանան, կվերականգնվեն հասարակական տրանսպորտի երթեւեկները: **«Ազգի»** հարցին պատասխանելով՝ Գագիկ Բեգլարյանը տեղեկացրեց, որ առաջիկայում կբացվի Ծիծեռնակաբերդի խճուղին, որտեղ կկառուցվեն նաեւ էսկալատոր, լայնացված արագընթաց երկկողմանի փողոց: Նախատեսվում է նորաբաց կամրջին հարող ու շարունակող Դավիթ-Բեկի փողոցը լայնացնել ու բարեկարգել, որը Էրեբունի վարչական շրջանը կապում է Նոր Նորքի հետ, բեռնաթափելով մեքենաների մուտքը կենտրոն եւ կրճատելով մոտ 3,5 կմ ավելորդ ճանապարհահատվածը, տնտեսելով 5-7 րոպե ժամանակ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Քանի՞ եկեղեցի պիտի վրացականացվի, որ պայքարենք մնացյալի համար

Ախալցխայի Երեւման Սուրբ Խաչ հայկական եկեղեցին վրացիները ցանկանում են դարձնել վրաց կաթոլիկ կենտրոն, եւ այդ նպատակով եկեղեցում իրականացվում են բարեկարգման աշխատանքներ: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպության նախագահ, հուշարձանագետ **Սամվել Կարապետյանը** մտահոգություն է հայտնում այս առնչությամբ:



Նրա հաստատմամբ, վերջին տարիներին վրաց պատրիարք Իլյա Երկրորդի հովանավորությամբ Ախալցխայի հայ կաթողիկե եկեղեցիների յուրացման փորձ է արվում: «Արմաս» ակումբում երեկ հրավիրված ասուլիսում արված հայտարարության համաձայն, Ախալցխայի շրջանում արդեն իսկ որոշես վրացական են օծվել հայկական երկու եկեղեցի: Այսինքն՝ հայկական եկեղեցիներն օծելով վրացական՝ վրաց եկեղեցին յուրացնում է դրանք, խլում հայ համայնքից:

Այժմ էլ նույն քաղաքականությամբ եւ հոգեբանությամբ վրացական եկեղեցին փորձում է «լուծել» Ախալցխայի Երեւման Սուրբ Խաչ հայկական եկեղեցու հարցը՝ սարբերությամբ, որ հայկական այլ եկեղեցիները վրացական ուղղափառ դարձնելու փոխարեն որոշվել է Երեւման Ս. Խաչը թողնել կաթողիկե, բայց դարձնել վրացական: Կարապետյանի ներկայացմամբ, հենց այդ նպատակով էլ սկսվել են եկեղեցու ներսի մարման աշխատանքները, եւ արդեն արծարծվում են հայկական եկեղեցին վրաց կաթողիկե համայնքին հանձնելու լուրերը: Ողջ խնդիրն էլ այն է, որ վրացի կաթոլիկներ Ախալցխայում չկան, ուստի հայ կաթոլիկները ստիպված կարող են դառնալ վրացականացված եկեղեցու այցելուներ:

Որ այս առնչությամբ առանձնակի որեւէ մտահոգություն չի հնչել ոչ հայ առաքելական, ոչ կաթողիկե եկեղեցիների կողմից, նորություն չէ, եւ այս հարցին բանիցս անդրադարձել է նաեւ «**Ազգ**» օրաթերթը: Սամվել Կարապետյանի խոսքով, այս հարցով պետք է իր մտահոգությունը հայտներ նաեւ Հայ առաքելական եկեղեցին, քանի որ Երեւման Սուրբ Խաչ հայկական եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ առաքելական, միայն 18-րդ դարի սկզբին է փոխանցվել տեղի հայ կաթողիկե համայնքին:

«Մենք չենք կարող ձեռնպահ վիճակում տեր մնալ մեր արժեքներին: Ես չեմ իմանում՝ էլ քանի՞ եկեղեցի վրացիները պետք է զավթեն, յուրացնեն: Նրանք արդեն սողոսկել են Գուգարքի անտառները, որտեղ դարերով ամայի գյուղատեղիների եկեղեցիներն ու գերեզմանոցներ են վերացնում: Մեր տան միջից մեր հետքն են վերացնում», իր անհանգստությունն է հայտնում հուշարձանագետը:

Ա. Հ.

Վրացական արդարադատության «ծուղակ» հայաստանցիների համար

Արտաշես Մելքոնյանին դատապարտել են 2,5 տարվա ազատազրկման՝ առանց մեկ իսկ ապացույցի

1-ին էջից

Հայաստանի քաղաքացի Արտաշես Մելքոնյանի պարագայում վրացական իշխանությունները հարցին մոտեցել են այնպիսի կեցվածքով, որ արդարադատության մասին հայաստանյան տխուր պատկերացումները դրախտին մոտ իրավիճակ են թվում: 36-ամյա երիտասարդը, Ռուսաստանում աղրող եւ աշխատող Հայաստանի շատ այլ քաղաքացիների նման, վրացական սահմանը Վերին Լարսում հատելուց հետո ձերբակալվել է:

Ձերբակալվել ու արդարադատությանը որեւէ առնչություն չունեցող վրացական դատական ատյանի կողմից դատապարտվել է 2,5 տարվա ազատազրկման մի բանի համար, որ չի արել: Ընդ որում, դատավճիռ է կայացվել առանց մի փաստի, հանգամանքի, վկայի, որ հնարավոր կլիներ դնել Արտաշեսի նկատմամբ ներկայացված մեղադրանքի հիմքում:

2009 թվականի մայիսին Պյատիգորսկում աղրող եւ աշխատող Արտաշես Մելքոնյանը, իր շատ հայրենակիցների նման, ռուսաստանյան գրանցումը կրկին իրականացնելու համար Ադլերի անցակետով հատել է ռուսական սահմանը, սակայն այդպես էլ Աբխազիա չի մտել: Հայտնվելով չեզոք գոտում՝ Արտաշեսը չի անցել աբխազական կողմ, հետեւաբար չկա եւ ոչ մի կնիք, չկա վկայություն, որ նա մտել է Աբխազիա: Կարեւոր է, որ ռուսաստանյան միգրացիոն ծառայությունը բավարարվում է երկրից ելքի եւ մուտքի կնիքներով՝ առանց կարեւորելու այլ երկիր մուտքի մասին վկայող կնիքները:

Խնդիրն այն է, որ, ինչպես բազմիցս նշել է **«Ազգ»** օրաթերթը, Ադլերից Աբխազիա սահմանը վրացական կողմը դիտարկում է որպես «վրացական սահման, բայց որտեղ չկան վրացի սահմանապահներ եւ անցակետ»: Արդյունքում բոլոր նրանք, ովքեր հատել են այդ հատվածը եւ անձնագրում ստացել աբխազական կողմի կնիքը, վրացական օրենսդրության համաձայն, համարվում են «վրացական պետական սահմանը խախտողներ», որոնց Վրաստան այցելության դեպքում սպառնում է ազատազրկում կամ զգալի չափերի հասնող տուգանք:

Արտաշեսի պարագայում էլ 2010-ի սեպտեմբերին Վերին Լարսով Ռուսաստանից տուն վերադառնալու փորձն այդպես էլ հնարավորություն չտվեց հասնելու Հայաստան: Հենց սահմանին ձերբակալված հայաստանցուն վրացական իշխանությունները մեղադրանք ներկայացրին, թե Արտաշեսը մտել է Աբխազիա, ինչով հենց «խախտել է օկուպացված տարածք մուտքի կարգը»:

Շատ հետաքրքրական է, որ Արտաշեսին ներկայացված մեղադրանքի մասին փաստաթղթում նշվում է, թե նրա ձերբակալությունն իրականացվել է «բավարար ապացույցների հիման վրա», երբ Արտաշեսի անձնագրում աբխազական կողմի կնիք չկա: Որպես ապացույց մեղադրանքի հիմքում դրվել է Վերին Լարսի անցակետում Արտաշեսի անձնագիրը ստուգած սահմանապահի ցուցմունքը. ահ՛ թեզ արդարադատություն: Ավելին, քննիչի մեղադրանքի առնչությամբ փաստաթղթում անընդհատ նշվում է, թե կան փաստեր եւ ապացույցներ, բայց դրանցից ոչ մեկը որպես օրինակ անգամ չի նշվում:

Ինչեւէ, արդեն հոկտեմբերի 25-ին մեկ դատական նիստով Թբիլիսիի առաջին ատյանի դատարանը «գործը լսում ու դատապարտում է» Արտաշեսին 2,5 տարվա ազատազրկման: «**Ազգի**» տեղեկություններով, դատական նիստի ընթացքում դատախազն Արտաշեսին առաջարկել է ազատազրկումը փոխարինել 20000 լարի (մոտ 11 հազար ԱՄՆ դոլար) տուգանքով: Միայն երեւակայել է պետք, թե ինչ ախորժակ ունի վրաց դատական իշխանությունը, երբ նման տուգանք է ներկայացնում մարդու, որը հենց էժանության համար է նախընտրել անցնել թերեւս շատերի համար անհծյալ Վերին Լարսի անցակետով, այլ ոչ թե ընտրել առավել ապահով՝ օդային ուղին:

Հստակ է, որ նման տուգանքով ազատազրկումը փոխարինելու առաջարկն ուղղակի ձեւական բնույթ է կրել թեկուզ այն պարզաբանմամբ, որ նմանատիպ իրավիճակներում նախկինում վրացական իշխանությունները բավարարվում էին 2-3 հազար դոլարի չափով տուգանքներ նշանակելով: Արտաշեսի դեպքում ստացվում է, որ ընդհանրապես ոչ մի բանի համար դատապարտվելու փոխարեն նման ծանր տուգանքն ուղղակի անհեթեթություն է:

Անհեթեթությունների բաժնից է եղել նաեւ դատական նիստը, որ անցկացվել է մեկ օրում, արագ տեմպերով եւ խախտումների այն հիմնական փաթեթով, որ հայերի նկատմամբ կիրառվում են վրացական դատարաններում: Թե թարգմանության անորակության, դատավորի կամայականությունների, դատախազի անհիմն հայտարարությունների ինչ դրսեւորումներ կարող են լինել վրացական դատարանում, «**Ազգը**» ներկայացրել է ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի դատավարության ողջ ընթացքում:

Ամեն դեպքում, Արտաշես Մելքոնյանին վրացական իշխանությունները դատապարտել են 2,5 տարվա ազատազրկման, ինչի՞ համար՝ ոչ մի բանի՝ խախտելով ոչ միայն մի շարք միջազգային կոնվենցիաներ, այլեւ մարդու իրավունքների ամենահիմնարար դրույթներ՝ անմեղության կանխավարկածից մինչեւ ապօրինի ազատազրկում: Եթե այլ պարագաներում կան անձնագրերում աբխազական կնիքներով դատական գործերի օրինակներ, ապա այս դեպքում վրացական իշխանությունները ապօրինություն են դրսեւորում՝ մարդու դատելով առանց որեւէ հիմքի:

Արդեն իսկ երեկ Արտաշես Մելքոնյանի գործով վերաքննիչ դատարան բողոք է ներկայացվել: Ու թեեւ պետք է հուսալ, որ վրացական վերաքննիչ դատարանում ուղղակի կիսասկանան մեղադրանքի անհիմն լինելը, առանձնակի լավատեսություն այս հարցում ունենալու հիմք չկա: Թերեւս կարելի է հույսեր կապել Եվրոպական դատարանի հետ, որտեղ արդեն որեւէ մեկը չի կարողանա պնդել, թե Մելքոնյանը խախտել է վրացական «օկուպացված տարածքներ մուտքի կարգին» վերաբերող օրենսդրությունը:

ԿԱՐԵՎՈՐ, ԲԱՅՑ ԹԱՓԹՓՎԱԾ

Կարեւորված Հայաստան-Էմիրություններ գործարար համաժողով

Տեխնիկական եւ ոչ միայն տեխնիկական թափթփվածության ուղեկցությամբ

Հայ-էմիրաթական գործարար համաժողովը երեկ բացվեց Երեւանում: Հայաստանի համար Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) հետ համագործակցության կարեւորությունը կարելի է գնահատել թեկուզ այն փաստով, որ գործարար համաժողովին ներկա էր եւ ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի վարչապետը:

Տիգրան Սարգսյանը մասնավորապես նշեց, որ ԱՄԷ-ի հետ Հայաստանի քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը պարտավորեցնում է բարձրացնել նաեւ երկու երկրների տնտեսական համագործակցության մակարդակը: Այս համաժողովը, ըստ վարչապետի, հնարավորություն է տալիս զարգացնելու հարաբերությունները երկու երկրների գործարարների միջեւ, ներկայացնելու Հայաստանի ներդրումային գրավչությունը: Հայաստանին հատկապես հետաքրքրում է համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների, միջուկային ֆիզիկայի, միջուկային բժշկության, գյուղմթերքների վերամշակման, շինանյութերի արտադրության, քաղցրահամ ջրի արտահանման ոլորտներում: Տիգրան Սարգսյանը արաբ գործարարների ուշադրությունը հրավիրեց «Զվարթնոց» օդանավակայանում ստեղծվող ազատ տնտեսական գոտուն: Նա նաեւ հույս հայտնեց, որ ԱՄԷ-ում կայանալիք հաջորդ գործարար համաժողովում ներկայացվեն Հայաստանի կոնկրետ ներդրումային առաջարկները:

ԱՄԷ-ի արտաքին առեւտրի նախարար Շեյխա Լուբնա ալ Քասիմին նույնպես կարեւորեց համագործակցությունը Հայաստանի հետ, ասելով, որ 90-ականներից հետո Հայաստանը կայուն զարգացում է արձանագրում եւ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների, հանքարդյունաբերության, ոսկերչության ոլորտները կարող են արագ զարգանալ, եթե աջակցություն ստանան:

Կցանկանայինք ավելացնել, որ հակառակ այս երկրի հետ կարեւորվող համագործակցությանը, հայ-էմիրաթական գործարար համաժողովը կազմակերպած Զարգացման հայկական գործակալության գործողությունները սովորականից ավելի թափթփված եւ անկազմակերպ էին: Մասնավորապես, վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթի ժամանակ թարգմանելու սարքավորումները չէին աշխատում, եւ նա ստիպված թարգմանչին հրավիրեց ամբիոնի մոտ: Սարքավորումների հարցը կարգավորելուց հետո գործակալության աշխատակիցները անհաջող փորձ կատարեցին թարգմանիչ սարքերը հետ վերցնելու լրագրողներից, հավանաբար դրանց անբավարար լինելու եւ այլ անձանց տրամադրելու համար: Նրանց երեւի ոչ ոք չէր ասել, որ եթե լրագրողները հրավիրված են լուսաբանելու որեւէ միջոցառում, նրանք ունեն նույն իրավունքները, ինչպես մյուս հյուրերը: Այնուհետեւ, պատրաստված փաստաթղթերը միայն արաբերեն եւ անգլերեն լեզուներով էին: Անհասկանալի մնաց, թե գործակալության համար Հայաստանի պետական լեզուն այդ երկուսից ո՞րն էր: Իսկ սահմանափակ թվով տպագրված (հավանաբար գործակալությունը թղթի խիստ պակաս ունի) եւ ոչ բոլոր լրագրողներին հասած մամուլի հաղորդագրություններից հղում չենք կատարում, քանի որ ԱՄԷ-ում Հայաստանի դեսպանը լրագրողներին ասաց, որ այդտեղ հրապարակված երկու երկրների արտաքաղաքական հարաբերությունների թվերը իրականությանը չեն համապատասխանում: Այսքանը երեւի բավարար է, որ էմիրությունների գործարարները պատկերացում կազմեն Հայաստանի ներդրումային գրավչության մասին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հանդիպումները Լեհաստանում

Նոյեմբերի 3-ին Լեհաստանում գտնվող ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին ընդունել է այդ երկրի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկին: Բաղդասարյանը Լեհաստանի նախագահին է փոխանցել նախագահ Սարգսյանի՝ Հայաստան այցելելու հրավերը, որը Կոմորովսկին ընդունել է. նախատեսվում է, որ 2011-ին Լեհաստանի նախագահը կլինի Երեւանում: Հանդիպման ընթացքում Լեհաստանի նախագահը պատրաստակամություն է հայտնել աջակցել ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակում Հայաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացին, կարեւորվել է հատկապես «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը, որտեղ ընդգրկված է նաեւ Հայաստանը: Բաղդասարյանին ընդունել է նաեւ Լեհաստանի ներքին գործերի նախարար Ադամ Ռաթացկին: Վերջինիս հետ հանդիպմանը ձեռք են բերվել պայմանավորվածություններ երկու երկրների ոստիկանական մարմինների միջեւ մի շարք ուղղություններով համագործակցության մասին: Այդ շրջանակում առաջիկայում ՀՀ ոստիկանության եւ Լեհաստանի ՆԳՆ-ի միջեւ համագործակցության համաձայնագիր կստորագրվի:

Լեհաստանի պաշտպանության նախարար Բոգդան Կլիխը նույնպես հյուրընկալել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդին: Այս հանդիպման ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ, համաձայն որոնց լեհական կողմը կաջակցի ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության համագործակցության շրջանակում Հայաստանում իրականացվող պաշտպանական բարեփոխումներին: Հայ-լեհական կոնկրետ պայմանավորվածությունը վերաբերում է երկու երկրների միջեւ ռազմարդյունաբերական համագործակցության զարգացմանը:

Հ. Ա.

www.azg.am www.azgdaily.com

ԱԶԳ

Հասկացողություն

Կեղծիքի թվաբանություն

Ադրբեջանի ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորած քաղաքացիների թեական հանձնաժողովի ինտերնետ կայքը՝ www.humangov.az , ունի «Ադրբեջանում ահաբեկչական-դիվերսիոն գործողություններ» բաժինը: Իհարկե, որպես «գործողությունների կազմակերպիչ» մատնանշված են հայերը:

Որ դա զուտ քարոզչական եւ իրականության հետ կապ չունեցող նյութ է, կարելի է ապացուցել անգամ թռուցիկ դիտարկումների սահմանում: Այսպես. «1989թ. սեպտեմբերի 16-ին Եվլախի շրջանի տարածքում պայթեցվել է Թբիլիսի-Բաքու երթուղային ավտոբուսը, 5 մարդ զոհվել է, 25-ը՝ վիրավորվել»:

Նշված ժամանակաշրջանում Հայաստանը խորհրդային հանրապետություն էր, չուներ ազգային հատուկ ծառայություններ, իսկ Լեռնային Ղարաբաղում հայտարարված էր հատուկ դրություն: Բնականաբար, որեւէ մեկը, եթե նա ազգությամբ հայ էր, չէր կարող մուտք գործել Եվլախի շրջանի տարածք, որպեսզի իրականացներ Թբիլիսի-Բաքու երթուղային ավտոբուսի պայթեցումը:

«1990թ. փետրվարի 13-ին Եվլախ-Լաչին մայրուղու 105-րդ կիլոմետրի վրա պայթեցվել է Շուշի-Բաքու երթուղային ավտոբուսը, ծանր վիրավորվել է 13 մարդ»,- կարդում ենք նույն տեղում: Խարդախությունն ակնհայտ է. Շուշի-Բաքու երթուղու ավտոբուսը, եթե դեպքը տեղի է ունեցել Եվլախ-Լաչին ճանապարհի 105-րդ կիլոմետրի վրա, պայթեցվել է Լեռնային Ղարաբաղի այն ժամանակվա վարչական սահմաններից դուրս տարածքում:

Սա՝ առաջինը: Երկրորդ, արդեն արտակարգ դրության ռեժիմում գտնվող ԼՂ-ում տրանսպորտային միջոցների տեղաշարժը խիստ սահմանափակված էր եւ վերահսկվում էր: Երրորդ՝ Շուշիից տրանսպորտային միջոցներն այն ժամանակ ԼՂ տարածքում շարժվում էին զինվորական կարգախմբերի ուղեկցությամբ:

«1990թ. օգոստոսի 10-ին պայթեցվել է Թբիլիսի-Աղդամ երթուղային ավտոբուսը, զոհվել է 20, վիրավորվել՝ 30 մարդ», տեղեկացնում է կայքը: Թբիլիսի-Աղդամ երթուղու ավտոբուսը, սկսած Խրամ գետի կամրջից, պետք է որ տեղաշարժված լիներ բացառապես Ադրբեջանի տարածքում, ուստի անհավանական է, որ որեւէ հայ կարողանար ահաբեկչություն կազմակերպել: Զոհված եւ վիրավորված ուղեւորների թիվը չի համապատասխանում խորհրդային դարաշրջանի ավտոբուսների ուղեւորատարությանը: Եթե դա նույնիսկ եղել է հունգարական «Իկարուս» մակնիշի ավտոբուս, ապա, միեւնույնն է, առավելագույնը կարող էր տեղափոխել ոչ ավելի, քան 40 ուղեւոր:

Այսպես՝ մինչեւ վերջ: Հայերին է վերագրվում նույնիսկ Կրասնովոդսկ-Բաքու լաստանավի պայթյունը: Նպատակը մեկն է՝ տեղեկատվական մթնոլորտ ստեղծել, համառորեն պնդել, որ «Ադրբեջանը եւ ադրբեջանական ժողովուրդը ահաբեկչության զոհ են»:

Հեղինակները նույնիսկ հայտնագործել են երբեւէ գոյություն չունեցած «Աղդամ- Խոջավենդ» (նկատի է առնված ԼՂ Մարտունի շրջկենտրոնը) երթուղի, որտեղ, իբր, նույնպես ավտոբուս է պայթեցվել: Կեղծարարներն իրենց խելքով են չափում բոլորին եւ չեն սպասում, որ դատող մեկը կհարցնի, թե ի՞նչ ազգության ուղեւորներ էին Աղդամից մեկնում Մարտունի, եթե առաջինն ադրբեջանական, երկրորդը՝ հայկական բնակավայր է, իսկ երկու ժողովուրդների միջեւ պարզ մարդկային շփումներն անգամ Ադրբեջանի իշխանությունների հրահանգով եւ ՕՄՕՆ-ական խաժամուժի եռանդուն ջանքերով խաթարված էին, ուր մնաց՝ նրանք միմյանց հետ տրանսպորտային հաղորդակցություն ունենային:

Կայքի հեղինակներին Ասված ի սկզբանե է պատժել՝ զրկելով նրանց տրամաբանելուց: Ո՞ր բանական մարդը, մանավանդ եթե ծանոթ է իրադարձություններին, կհավատա, որ «1992 թ. հունվարի 28-ին հայ ահաբեկիչները Շուշի քաղաքի մոտ կործանել են ՄԻ-8 քաղաքացիական ուղղաթիռ, որն իրականացնում էր Աղդամ- Շուշի չվերթը, ինչի հետեւանքով զոհվել է 44 մարդ, հիմնականում՝ կանայք եւ երեխաներ»:

Ադրբեջանական քարոզչական տեխնոլոգներն իրավիճակը ներկայացնում են այնպես, ասես ամեն ինչ խաղաղ էր, աղդամցիները շուշեցիներին հյուր էին գնում, իսկ «հայ ահաբեկիչները վերցրին եւ կործանեցին քաղաքացիական ուղղաթիռը»: Իրականում, մինչդեռ, հնարավոր չէ, որ նշված օրը Աղդամից Շուշի քաղաքացիական ուղղաթիռ թռչեր: Այն պարզ պատճառով, որ նախօրեին Շուշիից ադրբեջանական կանոնավոր զորքերը հարձակվել էին Քարինտակ փոքրիկ գյուղի վրա, խայտառակաբար պարտվել, եւ դրությունն այնքան էր լարված, որ հազիվ թե աղդամցիներն իրենց կանանց եւ երեխաներին Շուշի ուղարկելու ցանկություն ունենային: Այն էլ՝ ձյուն-ձմռանը: Եվ ինչ ջանասիրությամբ են ստում՝ ներկայացնելով, որ ՄԻ-8 ուղղաթիռում եղել է 44 ուղեւոր:

Խորհրդային այդ «ճոպուռիկ» ուղղաթիռը կարող էր ընդունել առավելագույնը 20 ուղեւորի: Ամենայն հավանականությամբ, դա եղել է զինվորական ուղղաթիռ, որը, հավանաբար, թռչում էր օգնելու Քարինտակը գրոհած զորքերին կամ՝ տեղափոխելու զոհված ասկյարների դիակները:

Ով չի հավատում, թող համացանցում «Ադրբեջանի ազգային հերոսներ» նշումով փնտրի եւ կարդա, որ հիշյալ ուղղաթիռի անձնակազմի հրամանատարն էր Վիկտոր Վասիլեւիչ Սերյոգինը, երկրորդ օդաչուն՝ Սաֆիր Ախունդովը, բորտմեխանիկը՝ Արաստուն Մահմուդովը: Բոլոր երեքն էլ հետմահու արժանացել են Ադրբեջանի ազգային հերոսի կոչման: Որեւէ քաղաքացիական անձ նման պատվի Ադրբեջանում չի արժանացել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Դա իրենց է պետք

Մի առիթով Իլհամ Ալիեւը խոսել է այն մասին, որ «մենք ապրում ենք 21-րդ, այլ ոչ թե 19-րդ դարում»: Իհարկե այդպես է:

Խնդիրը, սակայն, բարդանում է, երբ նրա ասածը փորձում ենք տուգել ադրբեջանական հանրությանը թեական հովանավորության քարոզչամիջոցներով ներշնչվող գաղափարախոսությամբ:

Այստեղ, ահա, երանելի է պատկերվում նույնիսկ միջնադարը: Եվ այն տպավորությունն ես ստանում, թե հարեւան ժողովրդին նրա ապաշնորհ կառավարիչները ներշնչում են վերադառնալ քարանձավային կենցաղի, նույնիսկ՝ մարդակերության:

Հայտնվել է ոմն Ռիզվան Հուսեյնով, որ ամիսը մեկ Մոնթե Մելքոնյանի «ոչնչացման գործի նոր մանրամասնություններ» է հայտնագործում:

Եվ ինչ հաճույքով է նա խոսում կանիբալիստական գործողությունների մասին, որ, իբր, ինչպոր Իբադ Հուսեյնով է արել: Մեկ գրում է, թե իբր Մոնթեին հուղարկավորել են «փակ դագաղով», մերթ հնարում, թե նրա «աջ ձեռքի փոխարեն դագաղում ավտոմատն է երեւում»: Մի խոսքով՝ ամեն տեսակի հիմարություններ է դուրս տալիս, միայն թե համոզի, որ «քաջարի Իբադ Հուսեյնովը վրեժխնդիր է եղել»:

Այդ Իբադ կոչեցյալն էլ իր հերթին է դատարկաբանում: Երբեմն «հասնում է շրջափակված Ղարադաղլու եւ փրկում խաղաղ բնակիչներին», մեկ «հայտնվում Կուրոպատկինոյում եւ ոչնչացնում մի քանի տանկ եւ զրահամեքենա»:

Իսկ երբ չափից ավելի «դոզայի տակ է լինում», պոռոտախոսում է, թե «դիվերսիոն խմբով երկու անգամ ազատագրել են Մարտունի քաղաքն ու շրջանի տարածքի մեծ մասը, բայց օգնություն չստանալով՝ ստիպված նահանջել են»:

Ի՞նչ ասես այս «քաջարի զինվորին»: Միայն մի խորհուրդ՝ լավ կանի, եթե ինքնագործ խումբ կազմի եւ Փոխլուդարայի մեյդանում խաղա մեշադի Իբադի դերը: Հազիվ առիթ է, նախընտրական շրջան է: Ահագին փող կաշխատի:

Իսկ Ռիզվանը, մյուս «մարդակերները» թող «տղամարդու» իրենց գդակին հաշիվ տան, թե որտե՞ղ են թաղված Ադրբեջանի ազգային հերոսի կոչմանն արժանացածներից շատերը: Թեկուզ՝ հայտնի աղդամցի Ալլահվերդի Բաղիրովը:

Արժե, որ մտածեն: Դա իրենց է պետք:

Վ. Ա.

Խաղաղություն՝ Հարավային Կովկասին

Այս տարվա օգոստոսի 16-ը, ինչպես նաեւ նույն ամսվա 20-ը, առանց չափազանցության, պատմական տարեթվեր են: Նախ՝ օգոստոսի 16-ին Բաքվում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը ադրբեջանցի գործընկերոջ հետ ստորագրեց «ռազմավարական, փոխադարձ օգնության» պայմանագիր: Ալիեւ կրտսերը իսկույն այն որակեց պատմական: Օգոստոսի 20-ին արդեն Երեւանի «հերթն» էր. Հայաստան պաշտոնական այցով ժամանած ՌԴ նախագահ Մեդվեդեւը այդ օրը մինչեւ 2044-ը՝ հավելյալ 5 տարի ավելացնելու պայմանով, նախագահ Սարգսյանի հետ ստորագրեց Հայաստանում ռուսական ռազմական բազայի ներկայության երկարաձգման պայմանագիր: Ռուսաստանը պարտավորվեց «ՀՀ ՋՈՒ-ի հետ համատեղ պաշտպանել Հայաստանի թեական ողջ սահմանը»: Մի պահ մոռանալով Ադրբեջանի բազմաթիվ տնտեսական ծրագրերը, Իլհամ Ալիեւի անձնական հարստությունը, կենտրոնանանք միայն այս երկու փաստի վրա եւ փորձենք պատասխանել՝ հնարավո՞ր է արդյոք նոր՝ հայ-ադրբեջանական պատերազմ Հարավային Կովկասում. մի կարեւոր հիշեցում եւս՝ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Բնականաբար, հայկական եւ ադրբեջանական կողմերի ռազմական գործիչները՝ մասնագիտության բերումով, չեն բացառելու պատերազմի վերսկսումը, քաղաքական գործիչները եւ «նրանցից սնվող ու նրանց սնող փորձագետները»՝ հատկապես ընտրությունների շեմին, անդադար շահարկելու են թեման, ազգաբնակչության շրջանում գոնե որոշակի խառնաշփոթ, եթե չասենք՝ վախ, առաջանալու է, մանավանդ, երբ կոնկրետ հայ հասարակությունը ականատես է Ադրբեջանի անընդհատ աճող ռազմական բյուջեին ու թարմացվող ռազմական տեխնիկային ու այդ հիմքով նախագահ Ալիեւի միանման հայտարարություններին: Սակայն ի վերջո հնարավո՞ր է արդյոք պատերազմի վերսկսումը: Մի պարզ ճշմարտություն կա՝ եթե կողմերը բանակցում են, ուրեմն պատերազմը՝ առնվազն հեռու է. Հայաստանն ու Ադրբեջանը այսօր բանակցում են, ճիշտ է՝ երբեմն պարզ չէ, թե ինչի մասին: Սակայն պարզ է, թե ում նախաձեռնությամբ, եւ դա ամենեւին էլ լրիվ Մինսկի խումբը չէ, այլ միայն Ռուսաստանը, որի նախաձեռնությունները՝ կոնկրետ այս հարցում, անվերապահ ընդունվում են Փարիզից եւ Վաշինգտոնից: Ուրեմն ստացվում է, որ Մոսկվան՝ կողմերին անընդհատ բանակցություններ սեղան վերադարձնելով՝ ամենեւին էլ չի ցանկանում պատերազմի վերսկսում, ստացվում է նաեւ, որ նույն ցանկությունն ունեն ԱՄՆ-ը եւ Եվրոպան՝ ի դեմս Ֆրանսիայի: Այս երեք ուժերի համաձայնությունից (որն ինքնին արդեն բացառիկ է) ծնված դիրքորոշմանը ախարհում շատ քչերը կարող են չհամաձայնել, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը հաստատապես այդ քչերից չեն, մանավանդ որ չպատերազմելու ցանկությունը ամենեւին էլ պարտադրված չէ: Ստացանք, ուրեմն մի պատկեր, որտեղ ոչ ոք չի ուզում պատերազմել, սակայն կողմերից մեկը պարբերաբար խոսում է այդ հավանականության (ոչ ցանկության) մասին: Ընդ որում՝ գործ ունենք միայն Ադրբեջանի պաշտոնական հայտարարությունների եւ առանձին ծայրահեղական տարրերի կարծիքի հետ: Կրկին չմանրամասնենք, թե ինչ կկորցնի կոնկրետ Ադրբեջանը՝ պատերազմ սկսելով, ինչպես արդարացիորեն պնդում է հայկական կողմը՝ տարածքներ, ինչպես չի պնդում, բայց հաստատապես մտածում է Մինսկի հզոր եռյակը՝ միջազգային հանրության վստահությունը, որն է՝ տնտեսական ներդրումներ, համատեղ նախագծեր, նավթի ու գազի գնորդներ...եւ ի վերջո՝ Ղարաբաղ, ու վերջնականապես: Ադրբեջանի ղեկավարության համար սա վաթսարագույն պատիժ է, հետեւաբար՝ Ադրբեջանի ղեկավարությունը պարզապես խոսում է՝ եթե ընտրություններ չկան՝ «միգուցե վախենա՞ն» սկզբունքով, եթե ընտրությունների շեմին են՝ «որպեսզի ընտրվենք» սկզբունքով:

Բայց կրկին վերադառնանք 2010-ի օգոստոս, սակայն նախքան դա անելը՝ հիշենք 1996-ը եւ 1999: 1996-ին Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ ստորագրվեց համաձայնագիր՝ «Ռազմական կրթության եւ ռազմատեխնիկական համագործակցության մասին», 1999-ին նույն երկրները ստորագրեցին «Ռազմավարական համագործակցության մասին» պայմանագիր: Ինչպես փոխանցում է Regnum գործակալությունը՝ Թուրքիան երաշխավորում է Ադրբեջանի անվտանգությունը «վերջինիս դեմ իրականացված յուրաքանչյուր ագրեսիայի պարագայում», իսկ Ադրբեջանը «չի կարող պատերազմ սկսելու ինքնուրույն՝ առանց Թուրքիայի համաձայնության, որոշում կայացնել»: Ահա եւ վերջ: Միայն փաստենք՝ 2010-ի օգոստոսի 20-ից Ռուսաստանը, իր հերթին, սկսեց երաշխավորել ՀՀ թեական անվտանգությունը՝ սահմանի ողջ երկայնքով: Ինչպես մի քանի օր առաջ նկատեց ՌԴ Պետդումայի փոխնախագահ Վլադիմիր Ժիրինովսկին՝ «Թուրքիան ամեն բանով օժանդակում է Ադրբեջանին, եւ այնպես է ստացվել, որ Ռուսաստանն իր հերթին օժանդակում է Հայաստանին: Եթե հանկարծ պատերազմը վերսկսվի, ապա Մոսկվան կմիջամտի, սակայն այդ միջամտությունը միտված կլինի խաղաղություն պարտադրելուն Ադրբեջանին»:

Ուրեմն՝ կլինի՞ նոր պատերազմ ղարաբաղյան գոտում. ցանկություն ոչ ոք չունի, մտադրություն՝ եւս, սակայն հավանականություն՝ կա, իսկ այն ներկայացնող Ալիեւ կրտսերը հավակնում է դառնալ առաջին ադրբեջանցին, որը, հրաժարվելով անձնական հարստությունից,... կարող է սկսել համաշխարհային պատերազմ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Նախկին դեսպան Էվանսը դարձյալ պատվի է արժանանում

ՀՀ-ում Ամերիկայի նախկին դեսպան Ջոն Մարշալ Էվանսը դարձյալ պատվի է արժանանալու նոյեմբերի 19-ին «Լոս Անջելեսի հայ արհեստավարժների ընկերության» (ԼԱՀԱԸ) կազմակերպած 52-րդ գալահամերգի ժամանակ եւ ստանալու է 2010 թվի պատվավոր «Տարվա արհեստավարժը» մրցանակը: Նա միջոցառմանը ներկա է գտնվելու, ըստ Կալիֆոռնիայի վաստակավոր լրագրող Ֆլորենս Ավագյանի, իր կնոջ՝ Դոննա Էվանսի հետ, որը Վաշինգտոնի Համաշխարհային գործերի խորհրդի նախկին նախագահն էր:

ԼԱՀԱԸ-ն հիմնվել է 1958-ին կրթության բնագավառում օժանդակելու հայ ուսանողներին եւ հայկական կրթօջախներին: Նախկինում նույն մրցանակին արժանացել են Վարդան Օսկանյանն ու Վարդան Գրիգորյանը:

Պատասխանելով Ավագյանի հարցին, թե արդյոք երբեւէ զղջացել է «ցեղասպանություն» բառն օգտագործելու համար, Էվանսը ասել է. «Ո՛չ: Ինչ ասել եմ, հիմնված է եղել պատմության (դասագրքերի), իմ ընթերցումների եւ 1948-ի «ցեղասպանության կոնվենցիայի» վրա: Գիտեի, որ բացասական հետեւանքներ է ունենալու: Բայց ափսոսում եմ, որ այդ բառի պատճառով իմ վերջին տարիներին արտասանած շատ այլ նախադասություններ ստվերում են մնացել»:

Էվանսը ռուսական պատմությունն է ուսումնասիրել Եյլ եւ Կոլումբիա համալսարաններում նախքան արտգործնախարարությունում աշխատանքի անցնելը: Դիվանագիտական առաքելություններով եղել է Թեհրանում, Պրահայում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Մոլդովայում եւ Հայաստանում: Ներկայումս նա գրքեր է գրում հայերին պատուհասած ցեղասպանության մասին: «Համարյա վերջացրել եմ, գրել է նա Ավագյանին, մնացել է մի քանի հավելումներ ավելացնեմ վերջին՝ «Հանձնարարականներ» բաժնում, որոնք, իմ կարծիքով, կարեւոր են Հայաստանին եւ հայերին ավելի լավ ապագա ապահովելու համար»: Նա նաեւ հիմնավոր ու փաստացի վկայություն է տվել «Դիվանագիտական ուսումնասիրությունների եւ պատրաստվածության ասոցիացիայի» բանավոր պատմության ծրագրի ներկայացուցիչներին եւ ստորագրել դրա գլխավոր պատճենը, որն ի վերջո հանձնվելու է Կոնգրեսի գրադարանին: Հ. Ծ.

Փարիզն ու Լոնդոնը միանում են, բայց կմնան անկախ

Ասանայում Ղարաբաղին կարող է եւ «հերթ» չհասնել

Նոյեմբերի 2-ին Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Քեմերոնն ու Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին պաշտոնապես հայտարարեցին, որ երկու երկրները կստեղծեն «համատեղ փորձարարական ուժերի» մեխանիզմ: Այս կապակցությամբ բրիտանական ռազմական գերատեսչության գլխավոր շտաբի պետ, գեներալ, սր Դեյվիդ Ռիչարդսը BBC-ին նշել է. «Այդ ուժերը կլինեն ոչ մշտական: Երկու երկրները ռազմական գործողություններ իրականացնելու համար կընդունեն համատեղ, միասնական որոշում եւ կտրամադրեն մոտ 5 հազար հոգուց կազմված բրիգադ: Այդ բրիգադը չի լինի ընդհանուր: Կլինեն երկու երկրներից բրիգադներ, որոնք կենթարկվեն մեկ, ընդհանուր հրամանատարի»:

Իսկ ինչո՞ւ հանկարծ բարեկեցիկ Եվրոպայում տոն տվող Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան որոշեցին որոշակիորեն ընդհանրացնել իրենց ռազմական ներուժը: Պատճառը, թերեւս, նոր պատերազմի նախապատրաստումը չէ (չնայած այդ հավանականությունը անտեսել այնքան էլ ճիշտ չէր լինի), այլ Եվրոպայի իսկաների տնտեսական խնդիրները, համենայն դեպս՝ այդպես են նշում բազմաթիվ փորձագետներ: Օրեր առաջ Եվրոմիությունը ընդունեց որոշում անդամ երկրների բյուջետային ծախսերը նվազեցնելու վերաբերյալ, ահա եւ Փարիզն ու Լոնդոնը, մտահոգված լինելով սեփական ռեսուրսների պահպանմամբ, ինչպես նաեւ համաշխարհային «խաղացողների» կարգավիճակը պահպանելու ցանկությամբ, որոշեցին միավորել իրենց ռազմավարական ուժերը: Արդի պայմաններում թե՛ Ֆրանսիան, թե՛ Բրիտանիան դժվարությամբ կկարողանային գտնել միջոցներ գլոբալ խաղացողներ մնալու համար, հետեւաբար՝ միավորման որոշումը արդարացված է:

Համաձայն երկկողմ համաձայնությունների՝ երկու երկրները կմիավորվեն հատկապես ռազմական տեխնիկայի ոլորտում, ինչը ապացուցում է, որ Ֆրանս-բրիտանական այս քայլը առավելապես տնտեսական հիմք ունի: Բյուջետային ծախսերի կրճատումից առաջին հերթին տուժելու է հենց զինուժի տեխնիկական կողմը: Հատկանշական է, որ երկրները «համատեղ կաշխատեն ատոմային զենքի, այդ թվում՝ համակարգչային ատոմային պայթյունների իրականացման պատրաստման վրա»: Այս ամենի շարադրը կպատրաստվեն Բրիտանիայում, իսկ կփորձարկվեն Ֆրնասիայում: Սակայն կոնկրետ փորձարկումը կարող է որոշակի խնդիրներ ունենալ, քանի որ երկու երկրներում էլ արգելված են ատոմային, բնականաբար՝ փորձնական, պայթյունները: Երկկողմ պայմանավորվածությամբ նաեւ կողմերը համատեղ կապասարկեն ռազմական ինքնաթիռներին, համատեղ կստեղծեն անօդաչու թռչող սարքեր, կիբեռպատերազմի համար անհրաժեշտ տարրեր եւ այլն:

Հետաքրքրական է նկատել նաեւ, շատ որ եվրոպացի ռազմական փորձագետների կարծիքով՝ շուտով ինչպես Բրիտանիան, այնպես էլ Ֆրանսիան ի վիճակի կլինեն պահելու միայն մեկական ռազմաօդային համակարգ: Ըստ վերոհիշյալ երկկողմ համաձայնության՝ շուտով դրանք կլինեն ընդհանուր՝ երկուսի համար: Սակայն, հասկանալի է, դրանք կարող են համատեղ օգտագործվել միայն այն պարագայում, երբ «կողմերը մասնակից են միեւնույն ռազմական հակամարտությանը»: Ընդ որում, Ֆրանսիայի պաշտպանության նախարար Էրվե Մորենը BBC-ի զրույցում նկատել է. «Ըստ համաձայնության՝ կողմերից յուրաքանչյուրը իրավասու է դուրս գալ այն ռազմական հակամարտությունից, որտեղ մեր երկրների շահերը չեն համընկնում», Լոնդոնում նույնպես այս մասին խոսում են նույնությամբ: Այսինքն՝ ֆրանս-բրիտանական միացյալ ռազմական գործողություններ կարող են իրականացվել բացառապես երկկողմ համաձայնությամբ: Իր հերթին Բրիտանիայի պաշտպանության նախարար Լիամ Ֆոքսը նշել է. «Մեր երկրների այս որոշումը ամենեւին էլ քայլ չէ դեպի ՆԱՏՕ-ի պառակտումը կամ Եվրոմիության միացյալ բանակի ստեղծումը, որին մենք սկզբունքորեն դեմ ենք: Ես մշտապես կարծել եմ եւ հիմա էլ այդ կարծիքին եմ, որ պաշտպանությունը պետք է լինի ինքնուրույն»:

Ինչեւէ, վերջին օրերին միջազգային մամուլում ամենաշատ քննարկվող հարցերից այս մեկը, սակայն, պարզվում է, ամենեւին էլ «նոր խոսակցություն չէ»: Դեռեւս 1998-ին բրիտանցի եւ ֆրանսիացի ղեկավարներ Բլերն ու Շիրակը Սեն-Մալոյում որոշեցին, որ «Եվրոմիությունը պետք է ունենա հնարավորություն որոշակի գործողություններ կատարելու՝ համոզիչ ռազմական ուժերի առկայությամբ»: Շիրակ-Բլեր որոշումը, սակայն, որեւէ հետեւանք չունեցավ, եւ Ֆրանսիան վերադարձավ ՆԱՏՕ: Այսօր, ամենայն հավանականությամբ, Փարիզը կուզենար Բրիտանիայի հետ ռազմական «միասնական համագործակցությունը» ծավալել հենց ընդհանուր եվրոպական միության համատեքստում, սակայն, գաղտնիք չէ, Լոնդոնը «խիստ ավանդապաշտ է»՝ ամեն եվրոպականին տվելու համար. ֆրանսիացիներն էլ թերեւս ոչ ժամանակ ունեն, ոչ էլ հավելյալ միջոցներ՝ սպասելու կամ համոզելու:

Հավելենք նաեւ, որ ֆրանս-բրիտանական ռազմական միությունը, չնայած բրիտանացի նախարար Ֆոքսի խոսքերին՝ «առավել սերտ է, քան երբեւէ», այդքան էլ մեծ լավատեսություն չի ընծայում, մանավանդ, վերհիշելով երկու երկրների (եւ ոչ միայն) համատեղ ռազմական անցյալը: Ճիշտ է, Առաջին աշխարհամարտի ժամանակ ֆրանսիացի մարշալ Ֆոշը ղեկավարում էր ֆրանս-բրիտանական միացյալ զորքերը, եւ բրիտանացիներն անգամ նրա արձանը տեղադրեցին Լոնդոնում, չնայած երկու երկրների ռազմական գերատեսչությունների ղեկավարները պարբերաբար ունենում էին «հույժ գաղտնի զրույցներ», որոնց արդյունքում որոշվեց Գերմանիայի դեմ հավանական պատերազմում գործել միասնաբար, սակայն այդ ժամանակվա (Երկրդ համաշխարհայինի տարիներին) բրիտանական կառավարությունը «հանկարծ» հայտարարեց, որ Փարիզի հետ ունեցած համաձայնությունները չեն նշանակում, որ Բրիտանիան պարտավոր է պատերազմի մեջ մտնել ընդդեմ Գերմանիայի, մինչդեռ փաստորեն պարտավոր էր՝ գոնե բարոյական տեսանկյունից:

Ֆրանս-գերմանական ռազմական միությունը, բնականաբար, կարող է առաջացնել Մոսկվայի «դժգոհություն-խանդը», ինչո՞ւ, որովհետեւ Մոսկվա՝ ի դեմս նախագահ Մեդվեդեւի, բազմիցս է բարձրաձայնել, որ Եվրոպան կարիք ունի նոր պաշտպանական, անվտանգության համակարգերի: Հիշում ենք, որ Ռուսաստանի նախագահը իր այս ծրագրերը պարբերաբար «կիսում էր» նախագահ Սարկոզիի հետ, որը, սակայն, մի «քայլ առաջ ցատկեց»՝ միավորվելով Լոնդոնի հետ: Անշուշտ դեկտեմբերի սկզբին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում ընթանալիք ԵԱՀԿ գագաթաժողովում այս հարցերը առաջնային են լինելու, բնականաբար Մեդվեդեւը եւս մեկ անգամ՝ բոլորի ներկայությամբ խոսելու է «նոր համակարգի անցնելու անհրաժեշտության մասին», իսկ մեր Ղարաբաղին կարող է եւ հերթ չհասնել, մանավանդ որ, ինչպես հոկտեմբերի 27-ին Աստրախանում նշեց Մեդվեդեւը՝ «Կողմերը այս մեկ ամսվա ընթացքում պետք է լավ աշխատեն՝ հիմնարար սկզբունքները մինչ Աստանա համաձայնեցրած լինելու ուղղությամբ». «Մեկ ամիսն» արդեն մեկնարկել է, սակայն, կողմերի լավ աշխատանք չի նկատվում, այնպես, ինչպես չեն սպասվում «հիմնարար սկզբունքներին» համաձայն Երեւան, Բաքու, եւ անշուշտ՝ Ստեփանակերտ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Փարիզում 8-րդ հարկից ընկած մանչուկը հայտնվել է անցորդի գրկում

Փարիզի արեւելքում գտնվող բնակելի շենքերից մեկի 8-րդ հարկից ընկնելը 1,5 տարեկան մանչուկի համար ավարտվել է զարմանահրաշ փրկությամբ: Կարճ ժամանակում առանց ծնողների հսկողության մնալով՝ փոքրիկը ընկել է բնակարանի բաց պատուհանից եւ հանգամանքների աներեւակայելի զուգադիպության շնորհիվ ողջ է մնացել:

Շենքի առաջին հարկում գտնվող արձարանը փակ է եղել, բայց հաստատության քաթանե ծածկը փրկել է երեխայի կյանքը, յուրօրինակ զսպակի դեր կատարելով:

Երջանիկ պատահականությամբ հենց այդ պահին արձարանի մոտով անցել է մի երիտասարդ, որը կարողացել է վայրկենապես արձագանքել եւ որսալ վերեւից ընկած մանչուկին:

«Սա զուտ պատահականություն է: Ես անհրաժեշտ ժամին հայտնվեցի անհրաժեշտ տեղում: Շատ ուրախ եմ երեխայի փրկության համար», հայտարարել է երիտասարդը, որը մասնագիտությամբ բժիշկ է եւ նախքան շտապ օգնության մեքենայի տեղ հասնելը պարզել է, որ երեխան բնավ չի տուժել:

Ականատեսներից մեկի կարծիքով, փրկարարը «հավանաբար երկար տարիներ զբաղվել է ռեգբիով, ուստի կարողանում է նման արագությամբ արձագանքել»: Մյուս ականատեսները շտապել են փրկել մանչուկի 3 տարեկան քրոջը, որը դուրս էր գալիս նույն պատուհանից եւ նույնպես կարող էր վայր ընկնել:

Ֆրանսպրեսը նշում է, որ միջադեպի պատճառները ներկայումս քննում է ոստիկանությունը, որը մի շարք հարցեր ունի տալու փոքրիկներին առանց հսկողության թողած ծնողներին:

Հունաստանը 2 օրով ընդհատել է միջազգային ավիաառաքումները

Բազմաթիվ ականված ծանրոցների հայտնաբերումը Հունաստանին ստիպել է 48 ժամով ընդհատել միջազգային ավիափոստի առաքումները: Այդ որոշման ընդունումից առաջ պայթուցիկ ծանրոցներ էին ուղարկվել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին, Աթենքում տարբեր երկրների (այդ թվում՝ Ռուսաստանի) դիվանագիտական հիմնարկներին, հաղորդում է BBC-ն:

Իշխանությունները կասկածում են, որ այդ ձեռնարկումներին մասնակից են ձախ ծայրահեղական խմբավորումները եւ ոչ թե «Ալ Ղաիդան», որը Եմենից պայթուցիկ երկու ծանրոց էր առաքել (դրանք հոկտեմբերի 29-ին կալանվեցին Մեծ Բրիտանիայում եւ ԱՄԷ-ում):

Հույն իրավապահները ձերբակալել են երկու կասկածյալների, սակայն բավարար ապացույցներ չկան, եւ խմբավորումներից ոչ մեկը առայժմ պատասխանատվություն չի ստանձնել ականված ծանրոցների առաքման համար:

Երեքշաբթի երեկոյան Աթենքից Հռոմ թռած օդանավում հայտնաբերվել էր Իտալիայի վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիին հասցեագրված պայթուցիկ ծանրոց: Օդանավը շտապ վայրէջք է կատարել Բոլոնիայի օդանավակայանում: Նույն օրվա երեկոյան Աթենքի օդանավակայանի բեռնահանգույցում վերահսկվող պայթյունով ոչնչացվել են Եվրոպոլին (Հոլանդիա) եւ Եվրոդատարանին (Լյուքսեմբուրգ) հասցեագրված երկու ծանրոցներ:

Բացի դրանից, նույն օրը Աթենքում պայթուցիկ ծանրոցներ են հայտնաբերվել եւ վնասազերծվել խորհրդարանի շենքի մոտ, Բուլղարիայի եւ Չիլիի դիվանագիտական ներկայացուցչություններում, իսկ Գերմանիայի դեսպանատուն ուղարկված ծանրոցը կալանվել է առաքման ընկերությունում:

Նոյեմբերի 2-ին ականված փաթեթ է պայթել նաեւ Աթենքում Շվեյցարիայի դեսպանատան մոտ: Նույն օրը Գերմանիայի ոստիկանությունը հայտարարեց, որ կանցլեր Անգելա Մերկելի վարչակազմի փոստային բաժանմունքում հայտնաբերված կասկածելի ծանրոցում պայթուցիկ սարք կա:

Աթենքում առաջին չորս պայթուցիկ ծանրոցները հայտնաբերվել էին նոյեմբերի 1-ին: Դրանցից մեկը հասցեագրված էր Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին, մյուսները՝ Մեքսիկայի, Բելգիայի, Հոլանդիայի դեսպանատներին:

Շվարցենեգերին փոխարինեց դատախազ Բրաունը

Ներկայացուցիչների պալատում դեմոկրատները կորցնում են մեծամասնությունը

Նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ում անցկացվել են Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի, Սենատի կազմի 1/3-ի, ինչպես նաեւ նահանգապետական ընտրությունները: Երկրի ամենամեծ եւ հայաբաշ նահանգ Կալիֆորնիայում հանրապետական նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերին կփոխարինի Դեմոկրատական կուսակցության թեկնածու, նահանգի գլխավոր դատախազ Ջերրի Բրաունը:

Ասուրիթեդ պրես գործակալությունը հիշեցնում է, որ Բրաունը 1975-1983 թթ. արդեն եղել է Կալիֆոռնիայի նահանգապետ: Այս անգամ նրա մրցակիցը հանրապետական Մեգ Ուիթմենն էր՝ eBay ինտերնետային աճուրդի նախկին գլխավոր տնօրենը:

Շվարցենեգերը նահանգապետ է ընտրվել երկու անգամ անընդմեջ եւ, ըստ նահանգի սահմանադրության, իրավունք չուներ այս անգամ եւս մասնակցել ընտրություններին: 1990-ին սահմանված այս արգելքը Ջերրի Բրաունի վրա չի տարածվում:

Կալիֆոռնիայից սենատոր է ընտրվել դարձյալ դեմոկրատ Բարբարա Բոքսերը: Նա չորրորդ անգամ է ընտրվում Սենատի կազմում: Այս անգամ նրա մրցակիցը Hewlett-Packard ընկերության նախկին գործադիր տնօրեն Կառլի Ֆիորինան էր:

Ընդհանուր առմամբ նահանգապետական ընտրություններում հանրապետականները դեմոկրատներից «խլեցին» 10 նահանգ: Դրանք են Փենսիլվանիան, Օհայոն, Միչիգանը, Վիսկոնսինը, Այովան, Թենեսին, Կանզասը, Օկլահոման, Նյու Մեքսիկոն եւ Վայոմինգը:

Կոնգրեսի զույգ պալատների ընտրությունների վերջնական արդյունքները դեռ հայտնի չեն, բայց արդեն ակնհայտ է, որ դեմոկրատները կորցնում են մեծամասնությունը Ներկայացուցիչների պալատում: Այնտեղ հանրապետականներն ապահովել են 435 տեղերից առնվազն 228-ը, իրենց ներկայացուցչությունն ընդլայնելով հինգ տասնյակ տեղերով: Դեմոկրատները ստացել են 156 տեղ: 49 տեղերի հարցը պարզ կդառնա քվեների վերջնահաշվարկից հետո:

Ընտրություններից առաջ դեմոկրատները Ներկայացուցիչների պալատում ունեին 255 տեղ, հանրապետականները՝ 178: Հանրապետականների հաջողությունից հետո պալատի նախագահի պաշտոնում դեմոկրատ Նենսի Փելոսիին կփոխարինի Ջոն Բեյներ:

Սենատում դեմոկրատները պահպանում են մեծամասնությունը, սակայն նրանց առավելությունը նվազել է: Վերջին տվյալներով, դեմոկրատներն ունեն 51 սենատոր, հանրապետականները՝ 46: Երեք տեղերի հարցը մնում է առկախ: Ի դեպ, դեմոկրատները կորցրել են Իլինոյսը՝ նախագահ Բարաք Օբամայի նահանգը: Սենատում Իլինոյսը կներկայացնի հանրապետական Մարկ Քիրքը:

Հանրապետական կուսակցությունից նախագահության նախկին թեկնածու Ջոն Մակքեյնը 5-րդ անգամ սենատոր է ընտրվել Արիզոնայի նահանգից:

Կենաց ծառի խորհրդանիշը Մարտիրոս Սարյանի արվեստում

Կուզեի, որ կտավներիս վրա, ինչպես մեր հողում, միշտ ծաղկեին ծիրանենիները...
Մ. Սարյան

Այս տարի լրանում է հայ ժողովրդի հանճարեղ զավակ, գեղանկարչության նահապետ Մարտիրոս Սարյանի ծննդյան 130-ամյակը: Այդ առիթով Վարդեշի տուն-թանգարանում հունիսի 30-ին բացվեց հոբելյանական հերթական ցուցահանդեսը՝ «Կենաց ծառի խորհրդանիշը Մարտիրոս Սարյանի արվեստում» խորագրով: Այն ընդգրկում է նկարչի ավելի քան 17 գեղանկարչական եւ 14 գրաֆիկական աշխատանք:

Ցուցահանդեսում ներկայացված են նկարչի ստեղծագործական տարբեր շրջանների բնանկարներ՝ սկսած վաղ շրջանի «Հեքիաթներ եւ երազներ» (1903-1909 թթ.) նկարաշարից մինչեւ վերջին մատիտանկարը (1972 թ):

Ցուցահանդեսը թույլ է տալիս հետեւելու նկարչի անցած միշտ իմաստավորված, միշտ ինքնատիպ ստեղծագործական ուղուն: Ուղի, որը հողագործի որդուն բերեց համընդհանուր ճանաչում, հասցրեց համաշխարհային արվեստի բարձունքներին:

Արվեստասեր հասարակության աչքի առաջ բացվում է մի աշխարհ, որը լի է սիրով դեպի բնությունը՝ Վարդեշի մեծ ուսուցիչը: Յուրաքանչյուր նկար ողողված է լույսով, մաքրությամբ, բնության գեղեցկության հանդեպ խորը հիացմունքով, աշխարհընկալման զարմանալի պարզությամբ: Բնանկարներում՝ անկախ նրանից, թե որ ստեղծագործական շրջանին են պատկանում, նույն իմաստուն ծառերն են: Դրանք իրենց արմատներում ամբարել են հազարամյակներից եկող իմաստություն, իսկ ճյուղերը զարդարված են տիեզերական պտղներով:

Մտնենք նրա ծաղկուն այգին, պարենք «Տիեզերքի ճամփորդի» հետ հաղորդակցվելու անհուն բերկրանքը, վայելենք վառ ու հարուստ գույներից հյուսված կախարդական աշխարհը:

Սնունդ առնելով մայր ժողովրդի հարուստ ու բազմադարյան մշակույթից՝ Մ. Սարյանը դարձավ համաշխարհային գեղանկարչության դասական, փիլիսոփա նկարիչ: Նա անցավ ինքնատիպ ստեղծագործական ուղի, ստեղծեց արմատներով հայ հին մանրանկարչություն, ազգային գեղարվեստական ավանդույթները ձգվող իր նկարչությունը:

Վրձնի վարպետի արմատները տանում են միջնադար: Նա կամրջեց մեր միջնադարը նորագույն նկարչությանը: Միջնադարյան արվեստի մասին խոսելիս հաճախ էր ասում, որ այն հզոր է ու մոնումենտալ, իր ժողովրդի բարոյական կերտվածքի պես ազնիվ:

«Իմ կյանքի բոլոր ժամերին, ասում է նա, - ունեցել եմ այն զգացումը, ինչը կարելի է անվանել տիեզերքի զգացում, պարել եմ տիեզերքի մասին մտորումներով...»:

Տիեզերքի հավերժական էությունը արվեստագետը մարմնավորել է բնության, ծաղկի, ծաղկած ծառի միջոցով: Նա ուներ բնության ընկալման, տիեզերքի գաղտնիքների, բնության երեւույթների, կյանքի հավերժական ընթացքի ներդաշնակության խոր զգացողություն:

Դոնի վտակ Սամբեկ տափաստանային գետակի ափին, բնության գրկում անցան նկարչի մանկության եւ վաղ պատանեկության տարիները: Նա ծնվել էր հողագործի ընտանիքում: Մանկուց գիտեր՝ ինչ է հողը: Այդ բույրը սերնդից սերունդ հիշողության մեջ պահած հայորդի էր նա: Բնության մեջ աչք բացած պատանու մեջ շաս վաղ է ի հայս գալիս նկարչական տաղանդը: Նա ուսանում է ռուսական գեղանկարչության դասականների՝ Կ. Կորովինի, Վ. Սերովի արվեստանոցներում: Ստեղծագործական որոնումները նրան տանում են աշխարհի տարբեր վայրեր: Նկարիչը ճամփորդում է արեւելյան երկրներում, անցնում նրա տոթակեզ ճանապարհներով, արեւից պաստպարվում է եգիպտական փարթամ արմավենիների ստվերում: Տարվում է բուրգերի ու սֆինքսերի առեղծվածային գեղեցկությամբ, բայց ստեղծագործական թեմա է ընտրում բնությունը, հասարակ մարդուն:

Թեեւ հայրենի երկրից հեռու էր ապրում, նա իր հարազատ ժողովրդի զավակն էր, նրա միտքը հայրենի երկրում էր, հայրենիքը՝ Հայաստանն էր: Քսանմեկ տարեկան էր, երբ առաջին անգամ ոտք դրեց մայրենի հողի վրա: Բախտավորություն ունեցավ տեսնելու հայկական բնաշխարհի գեղեցկությունը, արեւի, լույսի ու գույնի խորհրդավոր երազը: Ծնվեց «Հեքիաթներ եւ երազներ» ջրաներկերի եւ տեմպերաների շարքը: Դրանք ներթափանցված են լույսով, մաքրությամբ, բնության գեղեցկության հանդեպ խորը հիացմունքով, որը նկարիչը բարձրացնում է փիլիսոփայության աստիճանի: Այս աշխատանքները ներթափանցված են բնության ու կյանքի հանդեպ մեծ սիրով, զարմանքով: Ինչպես նկարիչն ինքն է գրում, ձգտում է պատկերել բնությունը «իբրեւ հեքիաթ՝ անարատ իր ամբողջության մեջ»: Այստեղ տեսնում ենք մի աշխարհ, որտեղ կա մարդու եւ բնության անհավասալի ներդաշնակություն, տեղափոխվում հեքիաթային աշխարհ, լցվում բանաստեղծական զգացմունքներով: Ահա «Զրհորի մոտ: Շոգ օր» (1908 թ.) նկարը, որի կենտրոնում կանգնած ծառը կարծես երկիր իջած տիեզերական մարմին լինի, որից լույս ու ջերմություն է ճառագում:

Նրա պտուղն ունի կենսական նշանակություն, քանի որ կենաց պտուղ է, սնունդ է առնում հողից ու տիեզերքից:

11-րդ դարի չին նկարիչ եւ բանաստեղծ Սու Շին գրել է. «Երբ ծառ ես նկարում, պիտի զգաս, թե ինչպես է աճում»: Բնապատկեր նկարչի պատկերած ծառերը՝ իբրեւ տիեզերքի մոդելավորում, աճում են մեր աչքի առաջ: Դրանք իրենց արմատներով ու տերեւներով ապրած իմաստուն ծառեր են, բնի մեջ պահած հազարամյա շերտերով, ճյուղերին՝ կենաց պտուղները:

Անհիշելի ժամանակներից սերնդեսերունդ փոխանցվել է ծառի պաշտամունքը, որը խորհրդանշում է արմատ, հող, հայրենիք: «Ամեն մի ժողովուրդ, - գրել է Մ. Սարյանը, - ես պատկերացնում եմ իբր հզոր մի ծառ: Այդ ծառի արմատները գտնվում են հարազատ հողում, իսկ ծաղկազարդ ճյուղերը պատկանում են ամբողջ աշխարհին»:

Բոլոր ծառերն էլ, լինեն դրանք եգիպտական փարթամ արմավենիներ, Արարատյան դաշտի բարդիներ, նռենիներ թե դեղձենիներ, խորհրդանշում են կյանքի հաստատումը հավերժության մեջ, անմահության գաղափարը, սերը կյանքի ու աշխարհի հանդեպ: Մարդն իր լինելության ողջ ընթացքում նորոգվում է, արարելով հաստատում՝ հոգու անմահության, հարատեւության խորհուրդը:

Կենաց խորհուրդ է հավատքը: Բնության մեջ մշտապես իրագործվող հարության խորհուրդն է պաշտում փիլիսոփա-նկարիչը:

Ծիրանենին, ըստ Արարատյան դիցաբանության, կենաց ծառն է եւ խորհրդանշում է հայկական լեռնաշխարհը: Պատմական աշխարհընկալումներում ներկայանում է որպես սրբազան դրախտավայր: Ծիրանենուն յուրահատուկ է սեր եւ երջանկություն պարգեւելը: Ծառին մոտ լինելը նույնն է, ինչ երջանկության եւ հաջողության համար երկնից օրհնություն ստանալը: Այն իր ողջ հմայքով, բույրով ու գեղեցկությամբ կարծես իշխում է կտավներում: Հմայիչ են ծաղկած ծառերը: Անսահման քնարականություն, քնքշություն ու պոեզիա կա դեղձենիների, ծիրանիների ստվերում: «Ծաղկած ծառեր» կտավը ողողված է Զորավոր եկեղեցու ղողանջներով ու ծաղկած ծառերի զգլխիչ բույրով:

Նկարիչը ոչ միայն նկարել է, այլ նաեւ տնկել է դեղձենիներ, նռենիներ, ծիրանենիներ, թզենիներ: Ժամանակակիցները պատմում են, թե ինչքան էր սիրում Սարյանը նստել իր աճեցրած ծառերի ստվերում: Արտի թթիռով ու հիացմունքով էր դիմավորում նրանց զարթոնքը ամեն տարի գարնանը: Սիրում էր աշխատել այգում, մշակում էր ծառերը, ծաղիկները:

«... Կարելի է պատկերել սոսկ ծաղկած մի ծառ, որ հետո պտուղ է տալու եւ ուրիշ ոչինչ, բայց կարելի է այդ ծառը պատկերել այնպես, որ այն դառնա անվերջ նորացող կյանքի մարմնացում, նրա անսպառ ուժի հաստատում», - գրել է արվեստագետը:

Մ. Սարյանի հովիտի պես բացված կենաց ծառը՝ հավիտենական սրբության, օրհնության, անմեղության խորհրդանիշն է, որը դիտողի երեւակայությունը տանում է դեպի երկինք:

«... Եթե կամենանք պատկերի օգնության դիմել, երեւի նրան կարելի է համեմատել կաղնու հետ: Իր արմատներով նա հայրենի հողի խորքերումն է, իսկ կանաչ կատարով միտված է դեպի երկինք»: Ահա այսպես է բնութագրել մեծ պանթեիստին գրականագետ Ռ. Զարյանը:

Հեքսաֆրքական են կյանքի մայրամուտին արված գրաֆիկական աշխատանքները, որոնք գլուխգործոցներ են: 92 տարեկան Վարդեշը նկարում է: Խոր ծերության հասակում նա կարծես վերադրում է երիտասարդ տարիների երեւակայության ազատ թռիչքը: Դրանք սեւի ու սպիտակի հարաբերություններով արված էսքիզներ են՝ կատարված մատիտով, ֆլոմաստերով, սակայն ստեղծում են գույնի պատրանք:

«Կայան, ես եւ Լուսիկը» նկարում մեծ իմաստություն, փիլիսոփայական խորություն կա: Նկարում պատկերված երեք ծառերը անձնավորված են. առաջին ծառը հայրն է՝ Կայան, երկրորդը՝ ինքը, երրորդը՝ իր երկար կյանքի ուղեկից կինը՝ Լուսիկը:

Իր վերջին զրույցներից մեկում Սարյանն ասել է. «Տեսնում եք ծաղկամանի այս բույսը: Ահա, այստեղ նոր տերեւ է դուրս գալիս, իսկ ներքեւում այս մյուսը կախ է ընկել արդեն, դեղնել: Ժամանակ առ ժամանակ իմ հայր Կատարինեն գալիս, հեռացնում է կախ ընկած տերեւը, իսկ նոր դուրս եկողը բռնում է կտրվածի տեղը: Այդպես է կյանքը, հարատեւ, միշտ փոփոխվող»: Դիմելով հրաջը՝ Կատյային, ասում էր. - Իմ անուշիկ մայրիկս, երբ մեծանում ենք, նմանվում ենք մեր ծնողներին: Հետո նմանվում ենք բնությանը՝ ծառերին, լեռներին, քարերին, երկնքին»: Մինչեւ խոր ծերություն նա պահպանել է իրեն հատուկ բանաստեղծական խառնվածքը:

«Փյունիկյան արմավենի», 1911

Ջուլվեց հողին մեծ բնապաշտը, դարձավ ծառ, հող, ծաղիկ, դարձավ մեր երկրի շունչն ու հոգին: Հենց այդ մասին էլ երազում էր նկարիչը: Բնության հանդեպ ունեցած իր անկեղծ, մաքուր հիացմունքը նա պահեց սրբության պես:

Սերունդներին մնացին հավիտենություն խորհրդանշող վարդեշի կտավները. «Եթե քեզ ասեն, որ ես մահացել եմ՝ չհավատաս. կելնես Հայաստան աշխարհը շրջագայելու ու կտեսնես ինձ: Երբ Բյուրականից կնայես Արարատին, կտեսնես իմ նկարած կտավը, եւ ես կարդամ» (Ռ. Արամյան, «Անմահություն», Սովետական Հայաստան, 7 մայիսի, 1972):

Մարդկային կյանքը կարճ է, իսկ հավիտենականությունը՝ անսահման: Մ. Սարյանը նվաճեց իր անմահությունը: Նրա արվեստը, ինչպես միշտ, կանաչ է եղել, միշտ ծաղկած, ծածկված կենաց պտուղներով:

ՎԱՐԴՈՒՀԻ ԱԳԱՄՅԱՆ

Մելիքյանի «Ճանապարհ դեպի խոպան» գիրքը հիշեցնում է Օրուելի դասական հատորները

«Չնայած ոչ մի իրական զուգահեռ հնարավոր չէ անցկացնել իր գաղափարական եւ կառուցվածքային վարպետությամբ «Ճանապարհ դեպի խոպան» վեպի նման եզակի մի գրքի հետ, այդուհանդերձ նշեմ, որ դա ինձ հիշեցնում է Զորջ Օրուելի եւ միեւնույն մակարդակի այլ հեղինակների դասական դարձած գործերը: Երբ ես սկսեցի կարդալ այդ գիրքը, չգիտեի ինչ ակնկալել դրանից, բայց հայտնաբերեցի, որ դրա ամենափիլիսոփայական, ստեղծագործական, իմաստային, թեմատիկ եւ մշակութային մեծ ձգտումներ արտահայտող վեպերից մեկն է, որ ես երբեւէ կարդացել եմ իմ պրոֆեսիոնալ կյանքի 35 տարիների ընթացքում: Ինձ զարմացրել է արտակարգ ոճը: Տեսլականը եւ յուրօրինակությունը, ամբողջ պատմության խորաթափանց միտքը», գրել է Օլստերի (Իռլանդիա) համալսարանի գրականության դասախոս պրոֆ. Պոլ ՄկՔարթին գրախոսելով անգլերեն լեզվով Լոս Անջելեսում հոկտեմբերի 28-ին լույս տեսած Արմեն Մելիքյանի «Ճանապարհ դեպի խոպան (Մասն առաջին)» («Journey to Virginland») հատորի ամուր կազմով նախնական տարբերակը: Գիրքը, որի պատշգամբային եւ զանգվածային հրատարակությունը նախատեսված է դեկտեմբերի 31-ին, արդեն իսկ մեծ աղմուկ է բարձրացրել տաբուները խորտակելու եւ գրական ընդունված նորմերը խախտելու իր համարձակությամբ: «Վերապրելու համար Ամերիկային հենց այս գիրքն է անհրաժեշտ», ավելացրել է Պոլ ՄկՔարթին: Գրքից օրինակներ ունենալու ցանկություն են հայտնել Հելսինկիից եւ Ֆինլանդիայի այլ քաղաքներից, ըստ այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությանը, որը դժբախտաբար գրքի թեմայի եւ հեղինակի կենսագրության վերաբերյալ մանրամասներ չի պարունակում: Գիրքը ցանկացողների համար խորհուրդ է տրվում այցելել «www.JourneyToVirginland.com» կայքը:

Հ. Ծ.

Սահմանամերձ Վահան գյուղում նոր մանկապարտեզ

Գեղարքունիքի մարզի Վահան գյուղում բացվեց հիմնովին վերանորոգված մանկապարտեզի շենքը, որտեղ համայնքի 40 մանուկների հնարավորություն ընձեռվեց նախադպրոցական կրթություն ստանալ: Հայ-ադրբեջանական սահմանին մոտ գտնվող գյուղում մանկապարտեզի երկհարկանի շենքը կառուցվել է 60-ականների վերջում եւ երբեւէ չի վերանորոգվել: 90-ականներին հայ զինվորներին որպես ապաստան ծառայած շենքը հիմնովին վերանորոգման կարիք ուներ եւ այդ գործն այսօր իրականացրել են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնման ծրագիրը, «Սի, էյջ, էֆ»-ը եւ «Շեն» բարեգործական ՀԿ-ն:

Միջոցառմանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը, ծրագրի պատասխանատու Շերիլ Գրոսմանը, գյուղապետ Գուրգեն Բալյանը, համայնքի անդամներն ու հյուրերը: 1395 օր տեւած շինարարական աշխատանքներում զբաղված են եղել համայնքի 17 անձինք, իսկ մշտական աշխատանքի կանցնեն 7-ը: Գեղեցիկ կահավորված, սաք եւ սառը ջրով ու կահույքով ապահովված մանկապարտեզը լավ նվեր է Վահան գյուղի բնակչությանը:

Մ. Մ.

Բեմադրվելու է Մուշեղ Իշխանի «Կիլիկիո արքան»

«Հայկական տեղեկատվական կենտրոնից» հայտնում են, որ «Մրրն հայ ազգային արվեստի համակարգը» նոյեմբերի 9-ին ժամը 19.00-ին ներկայացնելու է Մուշեղ Իշխանի «Կիլիկիո արքան» բեմադրությունը: «Կիլիկիո արքան» բեմադրվելու է Երեւանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում: Բեմադրիչը Գայանե Ասլանյանն է, երաժշտական ձեւավորումը կատարել է Արսեն Գրիգորյանը: Գլխավոր դերերում հանդես են գալու Դավիթ Գասպարյանը, Արա Գեւորգյանը, Մարիամ Դավթյանն ու Գայանե Բալյանը:

Ի. Պ.

Անդրեասյանը զիջում է դիրքերը

Շախմատի Չիգորինի հուշամրցաշարի մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ տոնած Զավեն Անդրեասյանը վերջին երեք տուրերում բավարարվում է ոչ-ոքիներով, որի հետեւանքով մրցաշարային աղյուսակում ասիճանաբար նահանջում է: 6-րդ տուրում էլ Անդրեասյանը հաշտություն կնքեց ռուսաստանցի գրոսմայստեր Բորիս Գրաչովի հետ: Հայ շախմատիստը 4,5 միավորով 14-րդ տեղում է:

4-ական միավոր են վաստակել գրոսմայստերներ Կարեն Գրիգորյանը, Հրանտ Մելքումյանն ու Դավիթ Պետրոսյանը: Գրիգորյանը ոչ-ոքի խաղաց ռուսաստանցի գրոսմայստեր Դանիլ Լինչեւսկու հետ: Մելքումյանը սեւերով հաղթեց ռուսաստանցի Մախսիմ Սերովին, իսկ Պետրոսյանը պարտության մատնեց Ռուսաստանի մեկ այլ պատվիրակի՝ Դանիլա Բելոուսովին:

Վլադիմիր Պողոսյանի, Աղասի Ինանցի եւ Սուրեն Պողոսյանի օգտին գրանցված է 3 միավոր: Այս եռյակից տուրը հաջող էր միայն Աղասի Ինանցի համար, որը սեւերով հաղթեց ռուսաստանցի գրոսմայստեր Անաստասիա Սորոկինային: Վլադիմիր Պողոսյանը զիջեց Ռոման Լուկովին, Սուրեն Պողոսյանն էլ պարտություն կրեց Ստանիսլավ Բոգդանովիչից: Վիկտորիա Բաղդասարյանը ոչ-ոքի խաղաց Վալենտինա Ֆեդոսեեւայի հետ:

Հաղթարշավն է շարունակում մրցաշարի միանձնյա առաջատար, բոսնիացի գրոսմայստեր Իվան Սոկոլովը: Նա 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրա հերթական «զոհը» Իսրայելը ներկայացնող Իլյա Սմիրինն էր:

Առաջատարին կես միավոր է զիջում ադրբեջանցի Էլթաջ Սաֆարլին: Նա սեւերով պարտության մատնեց բելառուսցի Ալեքսեյ Ֆյոդորովին: 9 շախմատիստներ վաստակել են 5-ական միավոր: Մրցաշարի ավարտին մնաց 3 տուր:

«Տոտենհեմի» համոզիչ ռեւանշը

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 4-րդ տուրում մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Լոնդոնում կայանալիք «Տոտենհեմ»-«Ինտեր» մրցավեճը: Հիշեցնենք, որ 2 շաբաթ առաջ Միլանում կայացած խաղում «Տոտենհեմը» խաղալով 10 հոգով եւ մրցակցին զիջելով 0-4 հաշվով, կարողացել էր 3 գոլ խփել ու շատ մոտ էր խուսափելու պարտությունից: Եվ ահա Լոնդոնում անգլիացիները համոզիչ ռեւանշի հասան չեմպիոնների ներկայիս գավաթակրի նկատմամբ՝ հաղթելով 3-1 հաշվով: Ընդ որում մինչեւ 80-րդ րոպեն դաշտի տերերը Վան դեր Վարտի եւ Կրաուչի խփած 2 գոլերի շնորհիվ առջեւում էին: Սամյուել Էտո՛Օն կրճատեց հաշիվը՝ խփելով մրցաշարում իր 7-րդ գոլը, սակայն խաղավերջում աչքի ընկավ Ռոման Պավլյուչենկոն:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Հարի Ռեդնապ («Տոտենհեմ»)-Այսօր թիմը հիանալի խաղաց: Ճնշում էին գործադրում մրցակցի վրա, գերազանցում էին խաղային դրվագներում: Այժմ լավ հնարավորություն ունենք շարունակելու պայքարը հաջորդ փուլում:

Ռաֆայել Բենիտես («Ինտեր»)-«Տոտենհեմը» դաշտում ազատ էր գործում, ուստի վսանգավոր պահեր շատ ստեղծեց: Մայկոնին չհաջողվեց ինչպես հարկն է վնասազերծել Բեյլին: Այս մարզադաշտում հետաքրքիր է «Տոտենհեմի» հետ խաղալը: Դաշտի տերերը շատ արագ էին խաղում: Կարող էինք ժամկետից շուտ ուղեգիր նվաճել, բայց չստացվեց: Կփորձենք հաջորդ անգամ:

Ա խմբի մյուս խաղում «Զենիթն» հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց «Վերդերին» ու 5 միավորով ընթանում է 3-րդ տեղում: 7-ական միավորով առաջատարներն են «Տոտենհեմն» ու «Ինտերը»:

Բ խմբի առաջատար «Լիոնն» անդրանիկ պարտությունը կրեց՝ Լիսաբոնում 3-4 հաշվով պարտվելով «Բենֆիկային»: Խաղի սցենարը նման էր 2 շաբաթ առաջ կայացած «Ինտեր»-«Տոտենհեմ» մրցավեճին: Պորտուգալացիները 67-րդ րոպեին խաղը շահում էին 4-0 հաշվով, սակայն հետագայում 3 գոլ բաց թողեցին: «Լիոնը» 9 միավորով պահպանեց առաջատարի դիրքը: Ֆրանսիացիներին կարող էին միավորներով հավասարվել «Շալկե-04-ի» ֆուտբոլիստները, սակայն նրանք Իսրայելում տեղի «Հապոելի» հետ հանդիպումն ավարտեցին ոչ-ոքի (0-0):

Շ խմբում 3-րդ հաղթանակը տոնեց «Մանչեսթր Յունայթեդը»: Բուրսայում անգլիական թիմը 3-0 հաշվով ջախջախեց թուրքական «Բուրսասպորին»: Ալեքս Ֆերգյուսոնի սաները 4 խաղում վաստակել են 10 միավոր եւ առայժմ գոլ բաց չեն թողել: Իսկ ահա «Բուրսասպորը» պարտվել է 4 խաղերում էլ ընդհանուր 0-9 հաշվով: Մյուս խաղում «Վալենսիան» 3-0 հաշվով հաղթեց «Գլազգո Ռեյնջերսին»:

Դ խմբում ուշադրության կենտրոնում էր Կոպենհագենում տեղի համանուն թիմի եւ «Բարսելոնի» մրցավեճը: Այն ավարտվեց ոչ-ոքի (1-1) եւ 2 թիմերն էլ լավ հնարավորություն ունեն շարունակելու պայքարը հաջորդ փուլում:

Խաղից հետո մարզիչների կարծիքն այսպիսին էր:

Սոլե Սոլբակեն («Կոպենհագեն»)-Հիացած եմ իմ սաների խաղով աշխարհի ուժեղագույն ակումբի հետ մրցավեճում: «Բարսելոնի» հետ տղաները հավասար պայքար մղեցին, իսկ որոշ դրվագներում նույնիսկ գերազանցեցին հյուրերին: Ճիշտ է, վերջին 20 րոպեներին իսպանացիները խաղադաշտում տիրում էին նախաձեռնությանը:

Խոսեպ Գվարդիոլա («Բարսելոն»)-«Կոպենհագենն» ունակ է իրեն ձեռնտու արդյունքի հասնելու: Այդ թիմը շատ արագ է գործում, պաշտպանությունում բավական զգոն է: Դեռեւս չէի հանդիպել նման ուժեղ թիմի հետ «Բարսելոնը» գլխավորելու ընթացքում: Իմ թիմի խաղից գոհ եմ միայն առաջին խաղակեսում: Ինչ վերաբերում է արդյունքին, ապա կարող էինք հաղթել, եթե մեր տրամադրության տակ շատ ժամանակ ունենայինք:

Դ խմբի մյուս խաղում «Ռուբինը» Կազանում ոչ-ոքի (0-0) խաղաց «Պանաթինաիկոսի» հետ ու գործնականում զրկվեց ուղեգիր նվաճելու հնարավորությունից:

Շումախերը «Տարվա մարդ»

Գերմանական GQ ամսագիրն աշխարհի 7-ակի չեմպիոն Միխայիլ Շումախերին ճանաչել է «2010-ի մարդ»: Ընդհանուր առմամբ այդ մրցանակը հանձնվել է 13 հոգու: Շումախերը մրցանակը ստացել է որպես սպորտի բնագավառի ներկայացուցիչ:

Միխայիլ Շումախերը 3 տարվա ընդմիջումից հետո կրկին վերադարձել է «Ֆորմուլա-1» եւ հանդես է գալիս «Մերսեդեսում»: 41-ամյա մարզիկին մրցանակը հանձնել է «Ֆերարիի» նախկին ղեկավար Ժան Տոդտը, որը ներկայումս FIA-ի նախագահն է: Նրա որդի Շումախերը «Ֆերարիում» 5 անգամ հռչակվել է աշխարհի չեմպիոն: Մրցանակը հանձնելիս Տոդտը նշել է, որ ոչ մի էր հավատում, թե սպորտին հրաժեշտ տալուց 3 տարի անց 41-ամյա Շումախերը կվերադառնա: Իր հերթին Շումախերը շնորհակալություն է հայտնել կնոջը՝ Կորինային, որի համաձայնությամբ ինքը որոշեց վերսկսել ելույթները «Ֆորմուլա-1-ում»:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Մարտիրոսյան-Պավլիկ մենամարտի անցկացումը չի բացառվում

Սանկտ Պետերբուրգում կայացած բոնցքամարտի մրցաշարում ռուսաստանցի Գենադի Մարտիրոսյանը 3-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց Վիտոր Սային եւ նվաճեց միջին քաշային կարգում WBO-ի վարկածով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Մարտիրոսյանը ծնունդով երեւանցի է, ներկայումս բնակվում է Սանկտ Պետերբուրգում: Պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 23 մենամարտերից 21-ում նա հաղթել է, 2-ում պարտվել:

Կոլումբիայում օրերս ավարտված WBO-ի տարեկան համաժողովում քննարկվել է միջին քաշային կարգում ընտրական մրցաշար կազմակերպելու հարցը: Բացառված չէ, որ քաշային այդ կարգում դասակարգման ցուցակի առաջատար, 30-ամյա Գենադի Մարտիրոսյանը մրցի 3-րդ տեղում ընթացող Կելի Պավլիկի հետ: Այդ մենամարտի հաղթողը հետագայում իրավունք կստանա աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկել չեմպիոնական գոտու տեր Դմիտրի Պիրոգի հետ:

Արոնյանը կմասնակցի երկու մրցաշարերին էլ

Լեւոն Արոնյանը կմասնակցի վաղը Մոսկվայում մեկնարկող աշխարհի նախկին չեմպիոն Միխայիլ Տալի հուշամրցաշարին: Մրցաշարում հանդես կգան 10 գրոսմայստերներ: Լեւոն Արոնյանը մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի (2801): Հիշեցնենք, որ նա 2006-ին հաղթող է ճանաչվել Տալի հուշամրցաշարում:

Այս տարի Արոնյանի մրցակիցները կլինեն ռուսաստանցիներ Վլադիմիր Կրամնիկը (2791), Ալեքսանդր Գրիշչուկը (2771) եւ Սերգեյ Կարյակինը (2760), ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովը (2763), ուկրաինացի Պավել Էլյանովը (2742), Իսրայելը ներկայացնող Բորիս Գելֆանդը (2741), ԱՄՆ-ում բնակվող ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրան (2741), Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովը (2735) եւ չինացի Վան Հաոն (2727):

Մրցաշարը կանցկացվի շրջանաձեւ մրցակարգով եւ կավարտվի նոյեմբերի 14-ին: Իսկ նոյեմբերի 16-18-ը Մոսկվայում կանցկացվի կայծակնային շախմատի աշխարհի հերթական առաջնությունը 20 շախմատիստների մասնակցությամբ, 2 շրջանով:

Աշխարհի առաջնությանը կմասնակցեն Տալի հուշամրցաշարի 9 մասնակիցները, բացառությամբ Վան Հաոյի: Նրանց կմիանան ուկրաինացի Ռուսլան Պոնոմարյովը (2744), ադրբեջանցիներ Թեյմուր Ռաջաբովն (2744) ու Ռաուֆ Մամեդովը (2660), ռուսաստանցիներ Պյոտր Սվիդլերը (2722), Յան Նեպոմնյաշչին (2720), Դմիտրի Անդրեյկինը (2683), Բորիս Գրաչովն (2654) ու Բորիս Սավչենկոն (2632), Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը (2721), իտալացի Ֆաբիանո Կարուանան (2709) եւ ֆրանսիացի Մախիմ Վաշիե-Լագրավը (2703):

Բաշիստան փակեց Մարադոնայի վերադարձի ճանապարհը

Արգենտինայի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պարտականությունները կատարող Սերխիո Բաշիստան պաշտոնապես հաստատվել է այդ պաշտոնում: Բաշիստան հանդիպել է Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության հետ եւ ներկայացրել է ինչպես իր կատարած աշխատանքի հաշվետվությունն, այնպես էլ 2014-ի աշխարհի առաջնության նախապատրաստության ծրագիրը: Ղեկավարությունը գոհ է մնացել նրանից եւ որոշել է նշանակել գլխավոր մարզչի պաշտոնում մինչեւ 2014-ի աշխարհի առաջնության ավարտը:

Այնպես որ Արգենտինան չհետեւեց այլ հավաքականների օրինակին, որոնք եվրոպական երկրներից մասնագետներ են հրավիրում, այլ վստահեց տեղի կադրին: Բաշիստայի գլխավորությամբ արգենտինացիներն արդեն ընկերական 3 հանդիպում են անցկացրել: Օգոստոսին նրանք Դուբլինում 1-0 հաշվով հաղթել են իռլանդացիներին, սեպտեմբերի սկզբին Բուենոս Այրեսում ջախջախել են աշխարհի չեմպիոն իսպանացիներին (4-1), իսկ ահա հոկտեմբերին զիջել են ճապոնացիներին (0-1): Բաշիստայի համար լուրջ փորձություն կլինի նոյեմբերի 17-ին Բրազիլիայի հավաքականի հետ կայանալիք ընկերական հանդիպումը:

Բաշիստան մարզչական գործունեության փորձ ունի եւ հասել է նշանակալի հաջողության: 2008-ին նրա գլխավորությամբ Արգենտինայի օլիմպիական հավաքականը Պեկինում նվաճել է չեմպիոնի տիտղոսը: Իսկ որպես ֆուտբոլիստ նա 1986-ին Դիեգո Մարադոնայի հետ դարձել է աշխարհի չեմպիոն՝ ֆուտբոլասերների հիշողության մեջ մնալով իր ինքնաթիռ մորուքով: Բաշիստան այսպիսով փակեց հավաքական վերադառնալու Դիեգո Մարադոնայի ճանապարհը: Վերջինս, որ աշխարհի առաջնությունից հետո ինքնակամ հեռացել էր հավաքականից, ցանկանում էր կրկին վերադառնալ ու շարունակել աշխատանքը: Սակայն այժմ առնվազն մինչեւ 2014-ը գլխավոր մարզչի պաշտոնը զբաղված է:

Դեւիդ Հեյը կմենամարտի Կլիչկոների հետ

Գերծանրաքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյը հայտարարել է, որ իր մենամարտերը Կլիչկո եղբայրների հետ անպայման տեղի կունենան: Նա նշել է, որ բոնցքամարտի սիրահարները շատ մանրամասներ չգիտեն եւ իրենց թվում է, որ եթե մենամարտը չի կայանում, ուրեմն մրցակիցներից մեկը վախենում է մյուսից: Սակայն դա այդպես չէ:

«Շատ են խոսակցությունները, թե ես վախենում եմ Կլիչկոներից, նրանք են ինձանից վախենում: Երբ կմենամարտեմ Կլիչկոների հետ եւ երկուսին էլ նոկաուտի կենթարկեմ, այն ժամանակ այդ բոլոր խոսակցությունները կդադարեն», հայտարարել է Դեւիդ Հեյը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Պարո՛ն Զաքքարօղլի, էժանագին սենսացիայի գիրկը մի ընկեք

Թեհրանում անցկացված Մամուլի եւ լրատվական գործակալությունների 17-րդ ամենամյա ցուցահանդեսը հերթական անգամ առացուցեց, որ Հայաստանի հարեւան Ադրբեջանը դեռեւս սովոր չէ ապրելու խաղաղ-կիրթ միջավայրում եւ շարունակում է բարբարոս կեցվածքով ավերել ամեն հայկական բան:

Մի քանի օրվա լռությունից հետո ադրբեջանական կայքերը նախորեին սկսեցին ամենաստրբեր պատմություններ հորինել Թեհրանում հայ-ադրբեջանական ընդհարման մասին: Ադրբեջանական բոլոր կայքերն էլ խեղաթյուրում էին իրականությունը, սակայն այս առումով առաջատարը Vesti.az-ին տված ԱՊԱ-ի խմբագիր Զավիթ Զաքքարօղլու հարցազրույցն էր:

Հոկտեմբերի 26-ին՝ հայտնի միջադեպից հետո, որին ներկա էր նաեւ նա, Զաքքարօղլին ամեն կերպ փորձում էր հարթել իրավիճակը: Իրենց պատմում էին ադրբեջանական քոչվոր ցեղի «երբեմնի փառքի մասին»՝ համաշխարհային պատմությանը գոնե միջին չափով տեղյակ մարդու մեջ առաջացնելով խղճահարություն հեղինակի եւ բաժանողի հանդեպ:

Հայ-ադրբեջանական սկանդալի վերաբերյալ ադրբեջանական կողմը մի քանի օր շարունակ տալիս էր միայն լրատվություն, բնականաբար նրանք չէին գրում, որ իրենց շարքերում ցինիկներ կան, որոնք պարտվողի հոգեբանությամբ հարձակվում են, պոկում հարեւան պետության քարտեզը՝ հիմար երեխայի միամտությամբ հավաքալով, թե դրանով հարցերը կլուծվեն: Գուցե ԱՊԱ-ի լրագրող Սուլեյման Ֆարզալիեւը նման վարմունքով ցանկանում էր աչքի ընկնել ու Բաքու վերադառնալ որպես հերոս: Չէ՞ որ պատմությունը գալիս է ապացուցելու, որ «սուլթան» Ալիեւը հերոսի կոչում է տալիս միայն տականքներին՝ Ռամիլ Սաֆարով ձեզ օրինակ:

Հոկտեմբերի 29-ի առավոտյան հայկական պատվիրակության անդամներին մոտեցավ կազմակերպիչներից մեկն ու հարցրեց. «Ի՞նչ որոշեցիք, դուք վերադառնո՞ւմ եք տաղավար, շարունակո՞ւմ եք աշխատել»: Հայկական կողմի պատասխանը բացասական էր: «Եթե ձեզ անհարմարություն եմք պատճառում, կարող եմք լքել նաեւ հյուրանոցը»:

«Եթե հրաժարվում եք մասնակցել, սիրով եք դուրս գալ սենյակից», ասաց իրանցի կազմակերպիչը: Հայկական պատվիրակությունը իրանական կողմի նման վերաբերմունքը համարեց վերջին նախազգուշացում, ցուցահանդեսը ժամանակից շուտ չլքելու համար, սակայն ցուցաբերելով հասատակամություն՝ նույն օրը վերադարձավ Երեւան:

Այս ամենը երբեւէ չէր հրապարակվի, եթե ադրբեջանական կողմը փրփուրներից չկախվեր եւ սեփական թուլությունը թաքցնելու համար տուրք չտար երեւակայությանը:

Կատարվածի առնչությամբ մեծ են նաեւ իրանական կողմի թերությունները: Իրանական կողմը պետք է ենթադրեր, որ ցուցահանդեսի ժամանակ կգրանցվեն բախումներ, հետեւաբար պետք է հոգար ցուցահանդեսին ներկա յուրաքանչյուր մասնակցի անվտանգությունը, իսկ հայկական պատվիրակության անդամների անվտանգությունը հոկտեմբերի 25-ին կասկածի տակ էր դրված:

Բացի այդ, հավասարակշռություն բղավող իրանական կողմը որեւէ կերպ հավասար հարթությունների մեջ չգնահատեց իրավիճակը: Իրանական կողմի ներկայությամբ ադրբեջանացին մտավ հայկական տաղավար եւ պոկեց քարտեզը: Նման պարագայում իրանական կողմը պարտավոր էր բաց հայտարարությամբ դատապարտել ադրբեջանական կողմի ոտնձգությունները ու զգուշացնել, որ կրկնության պարագայում ադրբեջանական տաղավարը կփակեն: Սակայն իրանական կողմը չգնաց քաղաքակիրթ այդ քայլին, տեղի տվեց ադրբեջանական սադրանքին եւ հանեց վահանակը՝ հայկական կողմին կարծես հայտարարելով, որ վերջինիս ներկայությունը ցուցահանդեսին նպատակահարմար չէ:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀՈԳԵՊԵՍ ԱՆԻՍԱՎԱՍԱՐԱԿՉԻՌ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՊԱՀՎԱԾԸ ԲՆԱԴԱՏԵԼՈՎ՝ Զաքքարօղլին անընդհատ հարցնում էր. «Դու չտեսա՞ր, թե ես նրա վրա ինչպես գոռացի: Պատվիրակության անդամները դրա հետ ոչ մի առնչություն չունեն եւ համամիտ չեն նրա գործողությունների հետ»:

Միջադեպից հետո, շուրջ մեկշաբաթյա լռությունից հետո, ԱՊԱ-ի խմբագիրը սկսեց հեթիաթասացությամբ զբաղվել՝ հասկանալով, որ խայտառակված են ու պետք է գործի դնել ձայնալարերն ու գոնե ֆալշ նոտայով մի երգ երգել:

Ճիշտ է, նա ակնոց էր կրում, սակայն չէի ենթադրում, որ ԱՊԱ-ի խմբագիրը այդքան լուրջ տեսողական խնդիրներ ունի: Ակնոցի առկայությունը նրան չթեքեց է խանգարեր հայկական տաղավարում տեսնել ոչ միայն հայերեն, այլեւ անգլերեն եւ պարսկերեն լեզուներով գրքեր, բրոշյուրներ, թերթեր: Զարմանալի է, որ միայն մեծ աղմուկից հետո ԱՊԱ-ի խմբագիրը ենթադրեց, որ հայկական կողմը հեռացել է, որովհետեւ գիրք չի ունեցել ցուցադրելու համար: Կարիք չկա էժանագին սենսացիայի գիրկն ընկնել: Եթե հայկական կողմն այդքան վաս պատրաստված ներկայանար ցուցահանդեսին, որ անգամ գիրք չունենար, ապա ադրբեջանական ներկա լրատվամիջոցները այդ փաստին ավելի շուտ կարձագանքեին: Քարոզչական պատերազմ ծավալող յուրաքանչյուր լրագրող առաջին հերթին համեմատականներ է անցկացնում հակառակորդ պետության մեջ եւ առաջին հերթին մատնանշում դիմացինի թերությունները: Որպես ԱՊԱ-ի՝ Ադրբեջանի պետական գործակալության գլխավոր խմբագիր Զաքքարօղլուն, լրագրողական նրբությանը հաստատ պետք է տիրապետեր: Նա վաս լրագրող չէ, սակայն պրիմիտիվ սուտասան է: Նրան կարող եմ խորհուրդ տալ գոնե այնպիսի սուտ հորինել, որ ընթերցողները կարդան ու մտքում հեղինակին հիմարության մեջ չմեղադրեն:

Զաքքարօղլու հայտարարությունը, թե հայկական կողմը միայն քարոզչական բնույթի գրքեր էր բերել, հերքում են Թեհրանում հայկական տաղավարում կատարված բազմաթիվ լուսանկարները: Ինչ վերաբերում է քարոզչական գրականությանը, ապա հենց ադրբեջանական կողմն էր պարսկերեն «Ղարաբաղ» վերնագրով գիրք բաժանում այցելուներին, որտեղ, ի դեպ, չափազանց զավեշտալի դրամներ էին պատկերված, որ կողմը մի քանի անգամ փորձեց հայ լրագրողներին համոզել՝ վերադառնալ տաղավար, սակայն **«Ազգ»** օրաթերթի եւ PanArmenian.Net-ի լրագրողները հայտարարեցին, որ կվերադառնան միայն այն ժամանակ, երբ «Տատիկ-Պապիկ» հուշարձանի լուսանկարը հայտնվի տաղավարի պատին:

Ադրբեջանական կողմի նախորեի նման վայնասունը կապված է ոչ միայն այն փաստով, որ կատարվածի միակ մեղավորն իրենք են, այլեւ չէին սպասում, որ հայկական կողմը կկարողանա մեծ աղմուկ բարձրացնել:

Չէ՞ որ մինչ ընդհարումը նույն Զաքքարօղլին էր հայկական պատվիրակությանը զգուշացնում, որ հայկական երկու-հոգանոց պատվիրակության դեմ կանգնած է ադրբեջանական 7-հոգանոց տղամարդկանց խումբը՝ կարծելով, թե հայ լրագրողները կվախենան փոքրամասնություն լինելուց եւ լուռ կլսեն իրենց բարբաջանքները:

Հայկական կողմը ցուցահանդեսին բոյկոտ էր հայտարարել հոկտեմբերի 28-ին: Այն հրապարակվել էր հայկական մի շարք զանգվածային լրատվամիջոցներով: Այդ ժամանակ ադրբեջանական կողմը բոյկոտի վերաբերյալ վերլուծություններ չէր անում՝ հասկանալով, որ գրած յուրաքանչյուր տող իրենց դեմ է: Ադրբեջանական վայնասունը սկսվեց այն ժամանակ, երբ հայկական պատվիրակությունը Հայաստանում մամլո ասուլիս հրավիրեց՝ աշխարհին հայտարարելով անհերքելի ճշմարտությունը՝ զգուշացեք ադրբեջանցի լրագրողներից, նրանք խելագար են եւ վտանգավոր կյանքի համար:

Ինչ վերաբերում է հայկական կողմի կեցությանն ու «արտաքսմանը», ապա պիտի ասեմ եմք կրկին հիասթափեցնել ԱՊԱ-ի խմբագրին: Բոյկոտից հետո, երբ հայկական կողմը բաժանել էր թռուցիկները եւ փակել տաղավարը, իրանական պատվիրակությունը ժամանակից շուտ լքեցին Թեհրանի միջազգային օդանավակայանը: Հայկական կողմը ոչ մի դիտողություն չարեց, սակայն ցուցաբերելով հասատակամություն՝ նույն օրը վերադարձավ Երեւան:

Այս ամենը երբեւէ չէր հրապարակվի, եթե ադրբեջանական կողմը փրփուրներից չկախվեր եւ սեփական թուլությունը թաքցնելու համար տուրք չտար երեւակայությանը:

Կատարվածի առնչությամբ մեծ են նաեւ իրանական կողմի թերությունները: Իրանական կողմը պետք է ենթադրեր, որ ցուցահանդեսի ժամանակ կգրանցվեն բախումներ, հետեւաբար պետք է հոգար ցուցահանդեսին ներկա յուրաքանչյուր մասնակցի անվտանգությունը, իսկ հայկական պատվիրակության անդամների անվտանգությունը հոկտեմբերի 25-ին կասկածի տակ էր դրված:

Բացի այդ, հավասարակշռություն բղավող իրանական կողմը որեւէ կերպ հավասար հարթությունների մեջ չգնահատեց իրավիճակը: Իրանական կողմի ներկայությամբ ադրբեջանացին մտավ հայկական տաղավար եւ պոկեց քարտեզը: Նման պարագայում իրանական կողմը պարտավոր էր բաց հայտարարությամբ դատապարտել ադրբեջանական կողմի ոտնձգությունները ու զգուշացնել, որ կրկնության պարագայում ադրբեջանական տաղավարը կփակեն: Սակայն իրանական կողմը չգնաց քաղաքակիրթ այդ քայլին, տեղի տվեց ադրբեջանական սադրանքին եւ հանեց վահանակը՝ հայկական կողմին կարծես հայտարարելով, որ վերջինիս ներկայությունը ցուցահանդեսին նպատակահարմար չէ:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

Թուրքիայի համար հուսադրող է համարվում հանրաքվեականների հաղթանակը ԱՄՆ Կոնգրեսի ընտրություններում

1-ին էջից

Այլ կերպ, Կոնգրեսի միջանկյալ ընտրություններում դեմոկրատների նկատմամբ հանրաքվեականների հաղթանակը ակնհայտ է եւ անակնկալ էլ չէր: Պարզապես վիճելին ընտրությունների արդյունքները ԱՄՆ-ում առկա տնտեսական դժվարությունների պատճառաբանությամբ Օբամայի վարչակարգի վարկանիշի անկման հետ պայմանավորելն է: Անկախ վարկանիշի տատանումներից, ԱՄՆ-ում, որպես կանոն, միշտ ձգտել են նախագահի ազդեցությունը հակակշռել Կոնգրեսով՝ նախապատվությունը տալով հակադիր կուսակցությանը:

Համենայն դեպս, որքան էլ արդյունքները կանխատեսելի լինեին, ԱՄՆ-ի Կոնգրեսի միջանկյալ ընտրությունները եղել են աշխարհի ուշադրության կենտրոնում: Ընտրություններում հանրաքվեականների հաղթանակի ակնկալիքով դրանց ընթացքին ուշիուշով հետեւում էր նաեւ Թուրքիան, ունենալով դրա համար ԱՄՆ-ի հետ տարաձայնություններից, դրանց վրա թուրք-իսրայելական լարվածության բացասական ազդեցությունից բխող լուրջ պատճառներ, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունները առանց նախապայմանի նորմալացնելու նախագահ Օբամայի մոտեցումն ու Հայոց ցեղասպանության օրինագծին դեմոկրատների աջակցությունը:

«Միլլիեթը» նոյեմբերի 1-ի համարում, բնութագրելով որպես վճռորոշ Կոնգրեսի ընտրությունները, ի նպաստ Թուրքիայի էր համարել ուժերի հավասարակշռության փոփոխությունը: Այն առումով, որ Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների խստացման հարցում որդեգրած դիրքորոշումը եւ Իսրայելի հետ հարաբերությունների սրումը պատճառ էին դարձել, որ ԱՄՆ գործող Կոնգրեսը բացասաբար տրամադրվի Թուրքիայի դեմ: Ավելին, կոնգրեսականների սվար մի հատված Իսրայելի հետ լարվածության համար պատասխանատու է ճանաչում Թուրքիային:

Այս ամենի հետեւանքով կոնգրեսականները բացասաբար էին վերաբերվում Թուրքիային նոր զինատեսակների մատակարարմանը, խոչընդոտում էին Ֆրանս Ռիկարդոնեի նշանակմանը Թուրքիայում ԱՄՆ դեսպանի պաշտոնում, որը շարունակում է թափուր մնալ հուլիսի 31-ից, իսկ Օբամայի վարչակարգը, պահանջելով հայ-թուրքական արձանագրությունների առանց նախապայմանի վավերացումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման հարցում «ընդառաջում» էր Երեւանին:

Միաժամանակ ընտրություններում հանրաքվեականների հաղթանակով Նենսի Փելոսին զրկվում էր Ներկայացուցիչների պալատի խոսնակի, Սթինի Հոյերը մեծամասնական խմբակցության ղեկավարի, իսկ Հովարդ Բերմանը՝ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի պաշտոնից: Հիրավի, ընտրությունների արդյունքում նրանք կորցրել են զբաղեցրած պաշտոնը: Սակայն վերընտրվել են, նրանց հետ Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի, Հայ իրավանց խորհրդի սատարած թեկնածուների ավելի քան 90 տոկոսը, այդ թվում՝ այնպիսի հայամետ կոնգրեսականներ, ինչպիսիք են Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնը, Մարկ Քիրքը, Հայոց ցեղասպանության օրինագծերի հեղինակներ Ադամ Շիֆն ու սենատոր Բարբարա Բոքսերը:

Հակառակ դրան, չեն վերընտրվել Թուրքիա-ԱՄՆ բարեկամության միջխորհրդարանական խմբի մի շարք անդամներ, այսպիսով, զգալի կրճատվել է 125-հոգանոց խումբը: ANCA գործակալության վկայությամբ, ԱՄՆ-ում գործող թուրքական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչ Ալի Չինարը, նշելով այդ մասին, այնուամենայնիվ, հօգուտ Թուրքիայի է համարում ընտրությունների արդյունքները:

Ըստ երեւույթին նա նկատի ունի Ներկայացուցիչների պալատի խոսնակի, մեծամասնության ղեկավարի, ինչպես նաեւ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի փոխարինումը հանրաքվեականներով: Այդ իսկ պատճառով էլ Թուրքիայի համար հուսադրող է համարում հանրաքվեականների հաղթանակը:

Սակայն խնդիրը սոսկ Հայոց ցեղասպանության բանաձեւերը չեն, ոչ էլ դեմոկրատ Փելոսիի, Հոյերի կամ Բերմանի պաշտոնազրկումը, այլ հանրաքվեականների, հատկապես արմատական թեւի վրա հրեական լոբբիի ազդեցությունն ու Կոնգրեսի «հակաթուրքական ձեռնարկումներում» վերջինի ակտիվ դերակատարությունը, ինչպես նաեւ արտաքին քաղաքականության մեջ դեմոկրատների համեմատ հանրաքվեականների ավելի ագրեսիվ եւ կարգազանց դաշնակիցների նկատմամբ ավելի խիստ կեցվածքը: Սա նշանակում է, որ հանրաքվեականների առաջին հայացքից հուսադրող համարվող հաղթանակը ընտրություններում կարող է միանգամայն հիասթափեցնել Թուրքիային, եթե նա չվերանայի Իրանի նկատմամբ որդեգրած քաղաքականությունն ու սեփական նախաձեռնությամբ չկարգավորի հարաբերությունները Իսրայելի հետ:

JAVA ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԴՊՐՈՑ

Զնավորող համակարգեր հիմնադրամ

Հասցե. Աբելյան 6/1, (IT Park-ում, Հայքուսակի հարևանությամբ) A409 u.

Հեռ. +374 (0)55 56 32 68

Էլ.փոստ. info@formativesystems.com

Կայք. www.formativesystems.com

JAVA ծրագրավորման ուսուցում 3 փուլով

1. JAVA ծրագրավորման ներածություն
2. Տվյալների բազաների ծրագրավորում
3. Web ծրագրավորում

Յուրաքանչյուր փուլի տևողությունը 3 ամիս
Շաբաթական 2 պարապմունք, 2 ժամ տևողությամբ

Օրերը՝ երկուշաբթի և հինգշաբթի
Ժամերը՝ 15:30-17:30 կամ 18:30-20:30
Վարձը՝ ամսեկան 25.000 դրամ
Դասընթացների սկիզբը՝ դեկտեմբերի 1, 2010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 3.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: